

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

**0604 «ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ**

ԵՐԵՎԱՆ 2009

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների							
		Քննութ.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Ընդամենը	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		
						Տեսակ. ուսուցում	Այդ թվում		3-րդ կիս. 18 շաբ	4-րդ կիս. 16 շաբ.	5-րդ կիս. 12 շաբ.	6-րդ կիս. 11 շաբ.	7-րդ կիս. շաբ.	8-րդ կիս շաբ.	
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ														
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3տ		72	28	44		72						
1.2	Ռուսաց լոգու		4տ		72	40	32			72					
1.3	Օտար լեզու		4տ		72	42	30			72					
1.4	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		3տ		54	30	24		54						
1.5	Իրավունքի հիմունքներ		3տ		36	20	16		36						
1.6	Պատմություն		3տ		54	42	12		54						
1.7	Ֆիզիկական կուլտուրա		3,4,5,6		114	-	114		36	32	24	22			
	ԸՆԴԱՄԵՆԸ				474	474	272		252	176	24	22			
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		3տ		36	20	16		36						
2.2	Քաղաքագիտական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		4տ		18	8	10			18					
	ԸՆԴԱՄԵՆԸ				54	28	26		36	18	-	-			
3.	ԱՌԱՆՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
3.1	Հաղորդակցման հմտություններ	3			72	30	42		72						
3.2	Անվտանգություն և 1-ին օգնություն		3տ		18	8	10		18						
3.4	Համակարգչային օպերատորության հիմունքներ		3տ		72	14	58		72						
	ԸՆԴԱՄԵՆԸ				162	52	120		162	-	-	-			
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱ ՍՆԱԳԻՏԱԿԱՆ														
4.1	Տնտեսագիտության տեսության հիմունքներ	4			90	70	20			90					
4.2	Մասնագիտական անգլերեն (Spacial English)		6տ		72	30	42					72			
4.3	Ֆինանսային մաթեմատիկա	4			108	34	74			108					
4.4	Վիճակագրության հիմունքներ		6տ		36	24	12					36			
4.5	ՀՀ հարկային օրենսդրություն		6տ		36	17	19					36			
4.6	ՀՀ բանկային օրենսդրություն		5տ		72	38	34				72				
4.7	ՀՀ քաղաքացիական իրավունք		3տ		54	36	18		54						
4.8	Հաշվապահական հաշվառման հիմունքներ	3			72	26	46		72						
4.9	Բանկային մարքեթինգ		3տ		36	18	18		36						
4.10	Մաթեմատիկական հաշվարկների հիմունքներ	3			36	18	18		36						
	ԸՆԴԱՄԵՆԸ				612	311	301		198	198	72	144			
5.	ՀԱՏՈՒԿ ՄԱ ՍՆԱ ԳԻՏԱԿԱՆ														
5.1	Բանկային գործի հիմունքներ	4			90	48	42			90					
5.2	Հաշվապահական հաշվառումը բանկերում	5		5	108	40	68				108				
5.3	Ֆինանսական հաշվարկներ EXCEL ԿՕՓ-ի միջակայքում		4տ		72	24	48			72					
5.4	Բանկային հաշիվներ և դրամարկղային գործառնություններ		6տ		36	16	20					36			
5.5	Ավանդային և վարկային գործառնություններ	5			72	44	28				72				
5.6	Արտարժույթային գործառնություններ		5տ		54	26	28				54				
5.7	Արժեթղթերով գործառնություններ	6			72	54	18					72			
5.8	Վճարահաշվարկային համակարգեր	5			72	38	34				72				
5.9	Բանկային համակարգչային ծրագրեր		6տ		72	14	58					72			
	ԸՆԴԱՄԵՆԸ				648	306	354		-	162	306	180			

6.	ԸՆՏՐՈՎԻ										30	36		
	ԸՆԴԱՄԵՆԸ				66						30	36		
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				200									
	ՊԱՅՈՒՄՍԱՅԻՆ ԺԱՄԵՐ				36									
	ԸՆԴԱՄԵՆԸ				2052					22		14		
	Շաբաթվա ժամերի քանակը								648	576	432	396		
									36	36	36	36		

IV. ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐԴԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Բարոյագիտություն				ԿԱՔԻՆԵՏՆԵՐ
2	Հայոց եկեղեցու պատմություն			1	Բանկային գործառնությունների
3	Գործնական էթիկետ/գործնական վարվեցողության կանոններ/			2	Համակարգչային տեխնիկայի և ուսուցման տեխնիկական միջոցների:
4				3	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների
V. ՊՐԱԿՏԻԿԱ					
		Կիսամյակ	Շաբաթ		
1	Ուսումնական	4	3		
2	Արտադրական	5	6		
3	Նախաավարտական	6	6		
	ԸՆԴԱՄԵՆԸ		15		
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ					
ՀԱՄԱԼԻՐ (միջնոդուլային)					
1 « ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ » ԲԳՄ-4-09-011					
* «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»ԲԳՄ-4-09-001					
* «ԱՐՏԱՐԺՈՒԹՅԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»ԲԳՄ-4-09-016					
* «ԱՎԱՆԴԱՅԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»ԲԳՄ -4-09-015					
* « ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»ԲԳՄ-4-09-017					
* «ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐ ՈՒԹՅՈՒՆ»ԲԳՄ 4-09-006					
2 «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԲԱՆԿԵՐՈՒՄ» ՀՀԲ-04-09-12					
* « ԿՃ ԱՐՎՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»ԲԳՄ- 4-09-018					
* «ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՆԵՐ ԵՎ ԴՐԱՄԱՐԿՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»ԲԳՄ-4-09-014					
* «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»ԲԳՄ-4-09-008					
* «ՀՀ ՔԱՂԱՔԱՑԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԲԳՄ-4-09-007					
				1	ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ մարզադահլիճ, մարզահրապարակ
				2	
VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ					

1. Ուսանողների գիտելիքների յուրացման նակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

Մոդուլի անվանումը՝ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոդուլի դասիչը՝ ՀՄ-4-09-019

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ:

տեսական ուսուցում 30 ժամ

գործնական պարապումը 42 ժամ

Մոդուլի նպատակը՝ ուսանողների մոտ զարգացնել հաղորդակցման ունակությունները և նպաստել գործարար հաղորդակցման արդյունավետ հմտությունների ձևավորմանը:

Մուտքային պահանջներ՝ Չկա

Հատուկ պահանջներ՝ Չկա

Ուսումնառության արդյունքները. Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա՝

1. Գործարար/գործնական/ հաղորդակցման հմտությունների դերն ու նշանակությունը:
2. Հաղորդակցումը որպես տեղեկատվական գործընթաց:
3. Հաղորդակցումը որպես փոխադարձ ընկալում:
4. Հաղորդակցումը որպես փոխազդեցություն:
5. Գործնական հաղորդակցման բարոյական սկզբունքները և նորմերը: Գործնական հաղորդակցման էտիկետ:
6. Կոնֆլիկտների հոգեբանություն:
7. Բանակցությունների վարում :
8. Ժամանակի կառավարում: Սթրեսների կառավարում:
9. Գործարար հաղորդակցման ունակությունների և հմտությունների ամբողջական նկարագիրը:

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում:

Արդյունք 1. Գործարար /գործնական/ հաղորդակցման հմտությունների դերն ու նշանակությունը:

Կատարման Չափանիշները՝

ա. ներկայացնել գործնական հաղորդակցման էությունը:

բ. ներկայացնել գործնական հաղորդակցության ունակությունների ու հմտությունների կարևոր դերը անձի և կազմակերպության մշակույթի, վարկանիշի ձևավորման, գործունեության արդյունավետության ապահովման գործում:

գ. ներկայացնել հաճախորդների հետ հաղորդակցության սկզբունքները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է և թեստի միջոցով, որը կբացահայտի նրա գիտելիքները գործարար հաղորդակցության, նրա դերը անձի և կազմակերպության վարկանիշի ձևավորման հարցում:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ գործարար հաղորդակցության հմտությունները
- ❖ հաճախորդի հետ գործարար հաղորդակցության սկզբունքները
- ❖ գործարար հաղորդակցության դերը անձի և կազմակերպության վարկանիշի ձևավորման գործում

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը բավարար մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

Արդյունք 2. Հաղորդակցումը որպես տեղեկատվական գործընթաց:

Կատարման Չափանիշները`

ա. ներկայացնել գործնական հաղորդակցման ժամանակ տեղեկությունների հաղորդման և ստացման գործընթացի առանձնահատկությունները:

բ. ներկայացնել հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային միջոցները, նրանց արդյունավետ օգտագործման հիմնական մոտեցումները:

գ. օգտագործել մարմնի »շարժումների լեզվի« իմացությունը գրուցակիցների հետ գործընկերային հարաբերությունների ձևավորման և արդյունավետ իրականացման համար:

դ. ներկայացնել ցանկացած ստացված տեղեկություն չորս տեսանկյուններից:

ե. պարզաբանել գրուցակցի վիճակը և ցանկությունները:

զ. լինել ակտիվ լսողի դերում:

է. տալ ճշգրիտ հարցեր:

ը. ներկայացնել համոզիչ խոսքի հիմնական բաղադրիչները, երկխոսություն վարելու ճիշտ ուղղվածությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է և թեստի միջոցով, որը կչափորոշի գործնական հաղորդակցության ժամանակ տեղեկատվությունների հաղորդման և ստացման գործընթացի առանձնահատկությունների հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային միջոցների, մարմնների ժեստերի իմացության վերաբերյալ:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ գործնական հաղորդակցության ժամանակ տեղեկատվությունների հաղորդման և ստացման գործընթացի առանձնահատկությունները
- ❖ հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային միջոցների
- ❖ մարմնի »շարժումների լեզվի« տիրապետումը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստի առաջադարձած հարցերի կտրվի բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն :

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 3. Հաղորդակցումը որպես փոխադարձ ընկալում:

Կատարման Չափանիշները`

ա. ներկայացնել ընկալման սխալներ առաջացնող գործոնները և արդյունավետ ընկալման հոգեբանական մեխանիզմները:

բ.արագ կատարել զրուցակցի դիմագիտական վերլուծությունը և բացահայտել նրա հետ հաղորդակցության կազմակերպման հիմնական ուղղվածությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատել գործնական հանձնարարության կատարման հիման վրա:Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարվում է կատարել անձի դիմագիտական վերլուծություն:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ընկալման սխալներ առաջացնող գործոնները
- ❖ զրուցակաի դիմագիտական վերլուծություն

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե գործնական աշխատանքը կատարված է ամբողջությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն :

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 4. Հաղորդակցումը որպես փոխազդեցություն:

Կատարման Չափանիշները`

ա. վերլուծել հաղորդակցման մասնակիցների դիրքերը և հաղորդակցության փոխադարձ դրությունը:

բ. ներկայացնել »բաց« հաղորդակցություն հիմնական առանձնահատկությունները:

գ.ներկայացնել գործնական հաղորդակցության փուլերի հիմնական առանձնահատկությունները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատել գործնական հանձնարարության կատարման հիման վրա:Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարվում է կատարել հաղորդակցման մասնակիցների դիրքերի վերլուծություն:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ հաղորդակցման մասնակիցների դիրքերը և նրանց վերլուծությունը
- ❖ գործնական հաղորդակցության փուլերի հիմնական առանձնահատկությունները

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե գործնական աշխատանքը կատարված է ամբողջությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն :

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 5. Գործնական հաղորդակցման բարոյական սկզբունքները և նորմերը: Գործնական հաղորդակցման էթիկետ:

Կատարման Չափանիշները`

ա. ներկայացնել գործնական հաղորդակցությունում բարոյական պահվածքի կարևորությունը:

բ. հստակ պատկերացնել և ներկայացնել` ղեկավարի, ենթակայի, գործընկերոջ բարոյական պահվածքի հիմնական կանոնները:

գ. ներկայացնել գործնական հաղորդակցման էտիկետը և վարքի կուլտուրան:

դ. ներկայացնել գործնական հաղորդակցությունում հազուստի էտիկետի իմաստն ու նշանակությունը:

ե. ներկայացնել հաճախորդների հետ հեռախոսով արդյունավետ հաղորդակցվելու կանոնները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը հնարավորություն կտա ստուգելու ղեկավարի, ենթակայի, գործընկերոջ բարոյական պահվածքի հիմնական կանոնների հիմնացությունը : Գործնական աշխատանքի միջոցով ստուգել ուսանողի ` հաճախորդի հետ հեռախոսային, գործնական հաղորդակցման էթիկետը և վարքի կուլտուրայի իմացությունը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ գործնական հաղորդակցությունում բարոյական պահվածքի կարևորությունը
- ❖ ղեկավարի, ենթակայի, գործընկերոջ բարոյական պահվածքի հիմնական կանոնների հիմնացությունը
- ❖ գործնական հաղորդակցման էթիկետը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի անսխալ, գործնական աշխատանքը կատարված լինի պատշաճ մակարդակով;

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն և

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 8 ժամ

Արդյունք 6. Կոնֆլիկտների հոգեբանություն:

Կատարման Չափանիշները`

ա. ներկայացնել կոնֆլիկտների էությունն ու կառուցվածքը:

բ. ներկայացնել կոնֆլիկտների առաջացման պայմանները և զարգացման ընթացքը:

գ. բացահայտել կոնֆլիկտային իրավիճակներում սեփական պահվածքի ոճը:

դ. ներկայացնել կոնֆլիկտների կառավարման եղանակները:

ե. ներկայացնել կոնֆլիկտային իրավիճակներում «պահվածքի կոդեքսը»:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է իրավիճակային խստորի միջոցով

Հանձնարարել ուսանողին առաջարկել կոնֆլիկտային իրավիճակից դուրս գալու տարբերակ:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ կոնֆլիկտների առաջացման պայմանները և զարգացման ընթացքը:
- ❖ կոնֆլիկտային իրավիճակներում սեփական պահվածքի ոճը:
- ❖ կոնֆլիկտների կառավարման եղանակները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե իրավիճակային խնդիրը ճիշտ է լուծված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 7. Բանակցությունների վարում

Կատարման Չափանիշները`

ա. ներկայացնել բանակցությունների էությունը և սկզբունքային կառուցվածքը:

բ. ներկայացնել բանակցություններին նախապատրաստվելու գործընթացը:

գ. ներկայացնել բանակցային ռազմավարությունները և մարտավարությունները:

դ. ներկայացնել բանակցային գործընթացի արդյունավետությունը բարձրացնող հոգեբանական մեխանիզմները:

ե. որոշել բանակցություններում ձեռք բերված պայմանավորվածությունների հուսալիությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարության կատարման հիման վրա: Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարել կազմակերպել բանակցությունների վարման գործընթացը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բանակցությունների էությունը և սկզբունքային կառուցվածքը:
- ❖ բանակցություններին նախապատրաստվելու գործընթացը:
- ❖ բանակցային ռազմավարությունները և մարտավարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն և սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 8. Ժամանակի կառավարում: Սթրեսների կառավարում:

Կատարման Չափանիշները`

ա. ներկայացնել ժամանակի կառավարման հիմնադրույթները:

բ. ներկայացնել ժամանակի արդյունավետ օգտագործման մեթոդները, սկզբունքները, մոտեցումները:

գ. ներկայացնել սթրեսի էությունը, առաջացման պատճառները:

դ. ներկայացնել սթրեսի կառավարման հիմնադրույթները և նրանից պաշտպանվելու միջոցառումները:

ե. ներկայացնել հոգեբանական ինքնակարգավորման տեխնիկաները:

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի միջոցով, հնարավորություն կտա ստուգել ուսնողի գիտելիքները ժամանակի արդյունավետ օգտագործման և սթրեսի կառավարման վերաբերյալ:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ժամանակի կառավարման հիմնադրույթները
- ❖ ժամանակի արդյունավետ օգտագործման մեթոդները, սկզբունքները, մոտեցումները:
- ❖ սթրեսի էությունը, առաջացման պատճառները:
- ❖ սթրեսի կառավարման հիմնադրույթները և նրանից պաշտպանվելու միջոցառումները

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն և սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 9. Գործարար հաղորդակցման ունակությունների և հմտությունների ամբողջական նկարագիրը:

Կատարման Չափանիշները`

ա. ներկայացնել հաճախորդների հետ հանդիպմանը նախապատրաստվելու գործընթացը:

բ. ներկայացնել հաճախորդների հետ հաղորդակցման ժամանակ գործընկերային հարաբերությունների ստեղծման գործընթացը:

գ. պարզաբանել սեփական կազմակերպությունը և նրա ծառայությունները արդյունավետ ներկայացնելու ու խորհրդատվություն մատուցելու գործընթացը:

դ. ներկայացնել հաճախորդների բողոքներին ճիշտ արձագանքելու գործընթացը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական հանձնարարության կատարման հիման վրա: Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարելուստեղծել հաճախորդների հետ հաղորդակցման ժամանակ գործընկերային հարաբերությունների գործընթաց:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ հաճախորդների հետ հանդիպմանը նախապատրաստվելու գործընթացը:

❖ հաճախորդների հետ հաղորդակցման ժամանակ գործընկերային հարաբերությունների ստեղծման գործընթացը:

❖ հաճախորդի բողոքներին ճիշտ արձագանքելու գործընթացը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն և սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապուներ 4 ժամ

ՍՈՐՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝

ԱԱՕ-4-09-002

Մոդուլի տևողությունը՝ 18 ժամ

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական պարապուներ 10 ժամ

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ձեռնարկություններում աշխատանքային անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:

Մուտքային պահանջները՝ Զկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.
2. իմանա անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում.
3. իմանա արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.
4. ցուցաբերի առաջին օգնություն:

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը.

- բ. ճիշտ է ներկայացնում ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը.
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը.
- դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:
- ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը.
- զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:
Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ 2

Տեսական ուսուցում 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները.
- բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը.
- գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները.
- դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:
Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ 4

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական աշխատանք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները.

- բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները.
- գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները.
- դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից՝ նա պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների՝ նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի և սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչները.

- ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ՝
 - ջերմաստիճանը
 - հարաբերական խոնավությունը
 - փոշու առկայությունը
- բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ՝
 - օդափոխություն
 - ջեռուցում
 - ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսումնական պրոցեսում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ, սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներ անցկացնել արտադրամասում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ 6

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
 Գործնական աշխատանք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ցուցաբերել առաջին օգնություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը.
- բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը.
- գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ.
- դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները.
- ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը.
- զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ 6

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Մոդուլի տևողությունը՝	72 ժամ
Տեսական ուսուցում	14 ժամ
Գործնական աշխատանք	58 ժամ

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

Մուտքային մակարդակը՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

1. Իմանալ համակարգչի կառուցվածքը, տիրքպետել WINDOWS օպերացիոն համակարգին
2. կհասկանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը,
3. կկարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ,
4. կկարողանա պահպանել փաստաթուղթը,
5. կկարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ,
6. կկարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ,
7. կկարողանա տպագրել փաստաթուղթը:
8. կունենա ինտերնետում աշխատելու իմացություն

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ1. Իմանալ համակարգչի կառուցվածքը, տիրքպետել WINDOWS օպերացիոն համակարգին

- սխտեմային բլոկի կառուցվածք
- մոնիտորի կառուցվածք
- մկնիկի կառուցվածք
- ստեղնաշարի կառուցվածք
- լրացուցիչ սարքավորումների կառուցվածք
- աշխատանքային սեղանը և նրա կարգավորումները, Windows օպերացիոն համակարգի օբյեկտներն ու էլեմենտները, ֆայլ, թղթապանակ և պատուհան հասկացությունները:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը բանավոր ներկայացնում սխտենային բլոկի կառուցվածքը:
2. Ուսանողին բանավոր ներկայացնում է մոնիտորի, մկնիկի, ստեղնաշար և լրացուցիչ սարքավորումների կառուցվածքը:
3. Ուսանողը ներկայացնում է աշխատանքային սեղանը և նրա կարգավորումները, Windows օպերացիոն համակարգի օբյեկտներն ու էլեմենտները, ֆայլ, թղթապանակ և պատուհան հասկացությունները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք:

Ռեսուրսումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ 8

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *իմանալ* Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը
- *բացել* նոր փաստաթուղթ
- ստեղնաշարի օգնությամբ *մուտքագրել*
 - տեքստ (առանց ֆորմատավորման)
 - մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ)
 - սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ)
 - թվանշաններ
- *տեղաշարժել* Տեքստային ցուցիչը տեքստի մեջ
- *կատարել* տարրական ուղղումներ տեքստում
- *փակել* փաստաթուղթը
- *բացել* առկա փաստաթուղթը
- *իմանալ* Zoom գործիքի հնարավորությունները

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, ամենաշատը 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Ուսանողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում:
3. Ուսանողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղնաշարով Տեքստային Ցուցիչի տեղաշարժման հնարավորությունները:
4. Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլ են տրված որոշ անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք:

Ռեսուրսումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ 12

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3 . Տեքստերի տարրական ֆորմատավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *պատրաստել* Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար
- *նշել* բառերը և տեքստային հատվածները
- *կատարել* մուտքագրված տեքստի պարզագույն *ֆորմատավորում*
- *կատարել* տողերի հավասարեցում

փոխել միջտողային տարածությունները

- *փոխել* տեքստի գույնը Font Color գործիքով
- *փոխել* տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով
- *փոխել* պարբերության խորությունները լուսանցքներից
- *չեղյալ հայտարարել* (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները
- *վերականգնել* ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները
- *կրկնել* ֆորմատավորման վերջին գործողությունը
- Սենյուլի File\Page Setup հրամանի օգնությամբ
 - փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ
 - ընտրել էջի ուղղածիզ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը
 - ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ
- *պատճենել* տեքստը
- *տեղափոխել* տեքստը
- *տողադարձել* տեքստը
- *համարակալել* էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ:
3. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթ և ցուցադրում է մկնիկով և ստեղծաշարով տեքստը նշելու հնարավորությունները:
4. Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները:
5. Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները:
6. Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՏՄՈՒՐԱՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: ՈՒսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ 10

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Փաստաթղթի պահպանում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *իմանալ* փաստաթղթերի պահպանման իմաստը
- *պահպանել* նոր ստեղծված փաստաթուղթը
- *պահպանել* փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ:
2. Ուսանողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը:
3. Ուսանողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալների կատարելու դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ 8

Գործնական աշխատանք 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Աղյուսակների պատրաստում և խմբագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *պատրաստել* աղյուսակ
- աղյուսակի մեջ *մուտքագրել* տեքստ,
- *կատարել* ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ
- *ավելացնել* նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ
- *ջնջել* աղյուսակի տողերը և սյուները
- *փոխել* սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* աղյուսակի գծերի գույնը
- *գունավորել* աղյուսակի տողը և սյունը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի:
2. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ դրա հետ, պահպանում է վերջնական տարբերակը և տպագրում: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան բացթողումներ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ռեսուրսումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ 10

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *գծագրել* գրաֆիկական օբյեկտներ
- *գծագրել* գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը
- *գծագրել* կանոնավոր պատկերներ
- *ֆորմատավորել* գրաֆիկական օբյեկտները՝
 - տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ
 - պատճենել

- պտտել
- շրջել
- փոխել չափերը
- *խմբավորել* գրաֆիկական օբյեկտները
- *հավասարեցնել* գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ
- *զծագրել* տեքստային բլոկներ
- *գունավորել* գրաֆիկական օբյեկտները
- *երանգավորել* գրաֆիկական օբյեկտները
- *ստվերավորել* գրաֆիկական օբյեկտները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա:
2. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ 8

Գործնական աշխատանք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Փաստաթղթի տպագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Նախադիտման ռեժիմում *բերթել* փաստաթուղթը
- *իմանալ* Print պատուհանի ֆունկցիաները
- *տպագրել* փաստաթուղթը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն:
2. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունը ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով՝ անհատական համակարգիչների կաբինետում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ 8

Գործնական պարապմունք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 8. Ինտերնետում աշխատելու իմացություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *իմանալ* Ինտերնետ հասկացության նշանակությունը
- *ճանաչել* Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը

- *հմանալ* Ինտերնետային Հասցե հասկացությունը
- *հմանալ* History հրամանի նշանակությունը
- *հմանալ* Favorites հրամանի նշանակությունը
- *հմանալ* Stop հրամանի նշանակությունը
- *հմանալ* Refresh հրամանի նշանակությունը
- *հմանալ* Back և Forward կոճակների նշանակությունը
- *պատճենել* տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից
- *պատճենել* գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից
- *հմանալ* ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները
- ըստ չափանիշների *որոնել* ինֆորմացիա
- ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,
- *հմանալ* էլեկտրոնային փոստի նշանակություն
- *ուղարկել* և *ստանալ* էլեկտրոնային նամակներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը:
2. Ուսանողին հանձնարարվում է ցուցադրել History և Favorites հրամանները, բացատրել:
3. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը:
4. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը:
5. Ուսանողին հանձնարարվում է բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական ինֆորմացիան այդ էջից:
6. Ուսանողին հանձնարարվում է կատարել ինֆորմացիայի որոնում որևէ թեմայի շուրջ՝ օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները:
7. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը: Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների

կաբինետում, որը ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ 10

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ԲԳՄ-4-09-001

Մոդուլի տևողությունը՝ 90 ժամ

տեսական ուսուցում 70 ժամ

գործնական պարապուներ 20 ժամ

Մոդուլի նպատակը՝ Այս մոդուլը ուսումնասիրելիս ուսանողին պետք է ծանոթացնել տնտեսագիտության տեսության ընդհանուր դրույթներին, հասարակական արտադրության հիմքերին, հասարակական պահանջմունքներին և շահերին: Ինչպես նաև պետք է տրամադրել ապրանքային արտադրությանն ու փողի էվոլյուցիայի, կապիտալի և դրա կուտակման, դրամական կապիտալի շուկային վերաբերող անհրաժեշտ գիտելիքներ: Ծանոթացնել ֆինանսական հարաբերությունների համակարգին, տնտեսական աճին և համաշխարհային տնտեսությանը:

Մուտքային պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները:

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա՝

1. տնտեսագիտության տեսության առարկան, մեթոդները, տնտեսական հարաբերությունների համակարգը ինչպես նաև տնտեսական կատեգորիաները և տնտեսական օրենքները
2. հասարակական արտադրության էությունը և կառուցվածքը: Տնտեսական պահանջմունքները և շահերը
3. տնտեսական համակարգը և տնտեսավարման ընդհանուր խնդիրները ի դեմս շուկայական տնտեսական համակարգի
4. ապրանքային արտադրության էությունը և փողի ծագումը
5. կապիտալի էությունը, դրա կատարումը և դրամական կապիտալի շուկան
6. աշխատանքի շուկան և աշխատավարձի ձևերը ու համակարգերը
7. ձեռնարկատիրական գործունեության էությունը և դերը շուկայական էկոնոմիկայում
8. հասարակական արդյունքի վերարտադրության էությունը և ազգային հաշիվների համակարգը
9. ֆինանսական համակարգի էությունը և տնտեսական աճի ցիկլային բնույթը
10. համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները և կառուցվածքը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ տնտեսագիտության տեսության առարկան, մեթոդները, տնտեսական հարաբերությունների համակարգը ինչպես նաև տնտեսական կատեգորիաները և տնտեսական օրենքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ա/ ճիշտ է բնութագրում տնտեսագիտության տեսության ուսումնասիրության առարկան, խնդիրները, մեթոդները և զարգացման փուլերն ու ուղղությունները

բ/ ճիշտ է ներկայացնում տնտեսական հարաբերությունների էությունը և դասակարգման տարբեր մոտեցումները

գ/ ճիշտ է բացատրում տնտեսական կատեգորիաները, օրենքները և դրանց դասակարգումը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստի միջոցով: Առաջարկված թեստը պետք է չափորոշի հիմնական տնտեսական կատեգորիաների և օրենքների, տնտեսագիտության տեսության զարգացման ուղղությունների և այլնի իմացությունը: Իսկ հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է տա տնտեսագիտության տեսության առարկայի, խնդիրների, տնտեսական հարաբերությունների գրագետ սահմանումները:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բնութագրել տնտեսագիտության տեսության առարկան, խնդիրները, մեթոդները,
- ❖ ներկայացնել տնտեսագիտության տեսության զարգացման փուլերն ու ուղղությունները
 - ✓ մերկանտիլիզմ
 - ✓ ֆիզիոկրատիզմ
 - ✓ դասականներ
 - ✓ մարքսյան դպրոց
 - ✓ քենթրիջյան դպրոց
- ❖ ներկայացնել տնտեսական հարաբերությունները, կատեգորիաները և օրենքներն ու դրանց դասակարգումը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի անսխալ, իսկ հարց ու պատասխանի ժամանակ շարդրված մտքերը լինեն գրագետ և հիմնավորված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն և սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 8 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

Արդյունք 2. Իմանալ հասարակական արտադրության էությունը և կառուցվածքը: Տնտեսական պահանջումները և շահերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ա/ ճիշտ է բացատրում հասարակական արտադրության էությունը և կառուցվածքը

բ/ ճիշտ է պարզաբանում պահանջումների էությունը և կառուցվածքը

զ/ ճիշտ է ներկայացնում տնտեսական շահերի էությունը և կառուցվածքը

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի և հարց ու պատասխանի միջոցով: Վերջինիս հիմքում պետք է դրվի հասարակական արտադրության էությունը պարզաբանող սահմանումները, ինչպես նաև պահանջումները և շահերի էությունը պարզաբանող հարցեր: Այս թեստի միջոցով ստուգվում են ստուգվող նյութի իմացությունը, ինչպես նաև նրա յուրացման աստիճանը և խորությունը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բացատրել հասարակական արտադրության էությունը և կառուցվածքը:
- ❖ ներկայացնել արտադրության գործոնների դասակարգումը ըստ տարբեր տնտեսագետների
- ❖ պարզաբանել «պահանջում» և «պահանջարկ» հասկացությունները և պահանջումների կապը հասարակական արտադրության հետ
- ❖ ներկայացնել պահանջումների և շահերի դասակարգումը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի անսխալ, իսկ հարց ու պատասխանի ժամանակ շարադրված մտքերը լինեն գրագետ և հիմնավորված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն, սխեմաներ և գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 3. Իմանալ տնտեսական համակարգը և տնտեսավարման ընդհանուր խնդիրները ի դեմս շուկայական տնտեսական համակարգի:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է բացատրում տնտեսական համակարգի էությունը և դրա տարատեսակները

բ/ ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսակարգը որպես տնտեսական համակարգ և դրա առանձնահատկությունները:

գ/ճիշտ է ներկայացնում շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները և գործունեության սկզբունքները

ե// ճիշտ է պարզաբանում շուկայի հիմնական տարրերը: (առաջարկ , պահանջարկ , գին , մրցակցություն):

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի և գործնական աշխատանքի միջոցով: Վերջինիս դեպքում առաջադրված պարամետրերով պետք է կազմել առաջարկի և պահանջարկի կորերը՝ նշելով դրանց վրա ազդող գնային և ոչ գնային գործոնները: Առաջարկված թեստը կբացահայտի ձեռք բերված գիտելիքների մակարդակը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել տնտեսական համակարգի էությունը և տարրատեսակները
- ❖ ներկայացնել շուկայական համակարգը և դրա առանձնահատկությունները
- ❖ ներկայացնել շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները և սկզբունքները և գործառույթները
- ❖ ներկայացնել շուկայի տարրերը՝
 - ✓ առաջարկի օրենքը, առաջարկի կորը և առաջարկի առանձգականություն
 - ✓ պահանջարկի օրենքը , պահանջարկի կորը և պահանջարկի առանձգականություն
 - ✓ գնի էությունը, տեսակները և ձևավորման վրա ազդող գործոնները
 - ✓ մրցակցության էությունը և դրսևորման ձևերը (մոնոպոլիա, դուոպոլիա, օլիգոպոլիա)

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը և գործնական աշխատանքը կատարվի անթերի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն, սխեմաներ, գծապատկերներ և դիագրամաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 8 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 4. Ծանոթանալ ապրանքային արտադրության էությանը և փողի ծագմանը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է բնութագրում ապրանքային արտադրության էությունը և առաջացման պայմանները

բ/ ճիշտ է ներկայացնում ապրանքը և նրա հատկությունները

գ/ ճիշտ է ներկայացնում փողի ծագումը, զարգացման փուլերը և գործառույթները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի միջոցով: Առաջարկված թեստը կբացահայտի ձեռք բերած գիտելիքների մակարդակը, որի հիմքում կդրվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են ապրանքային արտադրության նախապայմանները, աշխատանքի հասարակական բաժանումը, փոխանակային արժեքի արտահայտության ձևերը, փողի ֆունկցիաները և այլ առանցքային հարցեր:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել ապրանքային արտադրության էությունը, առաջացման պայմանները
- ❖ ներկայացնել ապրանքի էությունը և նրա հատկությունները
 - ✓ սպառողական արժեք
 - ✓ փոխանակային արժեք
- ❖ ներկայացնել փողի ծագումը և զարգացման փուլերը
- ❖ ներկայացնել փողի գործառույթները

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի 90% ճշտությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն, սխեմաներ, գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 8 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 5. Իմանալ կապիտալի էությունը, դրա կուտակումը և դրամական կապիտալի շուկան:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ/

ա/ ճիշտ է բացատրում կապիտալի էությունը և տարբեր մեկնաբանությունները

բ/ ճիշտ է ներկայացնում կապիտալի շրջապտույտի տնտեսական բովանդակությունը և պտույտի էությունը

գ/ ճիշտ է ներկայացնում հիմնական և շրջանառու կապիտալը, հիմնական կապիտալի մաշվածությունը:

դ/ ճիշտ է պարզաբանում դրամական կապիտալի շուկայի էության և փոխատվական կախիտալի ձևավորման արդյունքները, փոխատվական տոկոսը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքի և համակցված թեստի միջոցով: Վերջինս իր մեջ ներառում է տեքստային և գծապատկերային տեղեկատվություն կապիտալի էության, շրջապտույտի, փոխատվական կապիտալի և տոկոսի վերաբերյալ, որոնք փոխադարձաբար լրացնելով միմյանց թույլ են տալիս մշակել արդյունքի յուրացման ճիշտ ընթացք: Գործնական աշխատանքի ժամանակ տրվում են պարամետրեր որոնք անհրաժեշտ են հիմնական կապիտալի մաշվածությունը, կապիտալի պտույտները, փոխատվական տոկոսի նորման հաշվարկելու համար:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել կապիտալի էությունը և տարբեր մեկնաբանումները
- ❖ ներկայացնել կապիտալի շրջապտույտի տնտեսական բովանդակությունը և պտույտի էությունը
- ❖ ներկայացնել հիմնական և շրջանառու կապիտալը և հիմնական կապիտալի մաշվածությունը
- ❖ ներկայացնել դրամական կապիտալի շուկան, փոխատվական կապիտալի ձևավորման աղբյուրները և փոխատվական տոկոսը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի 90% ճշտությամբ, իսկ գործնական աշխատանքը կհսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն, սխեմաներ, գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 8 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 6. Ծանոթանալ աշխատանքի շուկային և աշխատավարձի ձևերին ու համակարգերին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ա/ ճիշտ է բնութագրում աշխատանքի շուկան և նրա գործունեության մեխանիզմը

բ/ ճիշտ է ներկայացնում գործազրկության էությունը և ձևերը: Օուլքենի օրենքը

գ/ ճիշտ է բնութագրում տարիֆային համակարգը, Լորենցի կորը և Ջիմի գործակիցը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքի և թեստի միջոցով: Գործնական աշխատանքի ժամանակ պետք է հաշվարկել Օուքենի օրենքը և Ջիմի գործակիցը տրված պարամետրերի հիման վրա, ինչպես նաև կառուցել Լորենցի կորը: Իսկ թեստը պետք է չափորոշի այս արդյունքի հիմնական հասկացությունների, աշխատավարձի հավանական ձևերի, համակարգերի և այլնի իմացությունը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել աշխատանքի շուկան և գործունեության մեխանիզմը
- ❖ ներկայացնել աշխատավարձի ձևերը և համակարգերը
- ❖ բնութագրել գործազրկության եությունը ձևերը (Օուքենի օրենք)
- ❖ բացատրել Լորենցի կորի և Ջիմի գործակցի տնտեսագիտական իմաստները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի 90% ճշտությամբ, իսկ գործնական աշխատանքը կհսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն, գծապատկերներ, ինչպես նաև բանաձևային սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

Արդյունք 7. Իմանալ ձեռնարկատիրական գործունեության եությունը և դերը շուկայական էկոնոմիկայում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է ներկայացնում ձեռնարկատիրական գործունեության եությունը և դերը շուկայական էկոնոմիկայում

բ/ ճիշտ է պարզաբանում կազմակերպությունների կազմակերպարավական ձևերը

գ/ ճիշտ է բացատրում փոքր բիզնեսի եությունը և դերը շուկայական էկոնոմիկայում:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքի և թեստի միջոցով: Գործնական աշխատանքի եությունը կայանում է հետևյալում. ներկայացնել որևէ բանկի կազմակերպարավական ձևը՝ նշելով այդ ձևի առավելություններն ու թերությունները: Իսկ թեստը պետք է ընդգրկի առաջադրանքներ, որոնք պահանջում են ընդհանրացված նյութի ըմբռնում:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության եությունը և դերը շուկայական էկոնոմիկայում
- ❖ բնութագրել կազմակերպությունների կազմակերպարավական ձևերը.
 - ✓ առևտրային կազմակերպություններ (ձեռնարկատիրական ընկերություններ, ձեռնարկատիրական ընկերակցություններ, կոոպերատիվներ)
 - ✓ ոչ առևտրային կազմակերպություններ
- ❖ ներկայացնել փոքր բիզնեսի եությունը և դերը շուկայական էկոնոմիկայում

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի 90% ճշտությամբ, իսկ գործնական աշխատանքը շարադրված լինի գրագետ և տրամաբանորեն հիմնավորված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն, գծապատկերներ, բանկերի հաշվետվություններ, որտեղ կարող ենք գտնել տվյալ բանկի կազմակերպահրավական ձևը և կառավարման առանձնահատկությունները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 8. Իմանալ հասարակական արդյունքի վերարտադրության էությունը և ազգային հաշիվների համակարգը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է պարզաբանում հասարակական արդյունքի վերարտադրության էությունը , ձևերը և տիպերը

բ/ ճիշտ է բնութագրում հասարակական արդյունքի գնահատման մոտեցումները

գ/ / ճիշտ է բացատրում համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) և համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ազգային հաշիվների համակարգում

դ/ ճիշտ է բնութագրում ազգային հաշիվների հիմնական ցուցանիշների հարաբերակցությունը . ՀԱԱ , ՋՆԱ, ազգային եկամուտ , անձնական եկամուտ , տնօրինելի եկամուտ:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի միջոցով: Վերջինս պետք է ընգրկի առաջադրանքներ, որոնք պահանջում են ընդհարացված նյութի ըմբռնում, ինչպես նաև այն կբացահայտի ձեռք բերված գիտելիքների մակարդակը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ պարզաբանել հասարակական արդյունքի վերարտադրության էությունը, ձևերը և տիպերը:
- ❖ բնութագրել ազգային հաշիվների համակարգի հիմնական ցուցանիշները՝
 - ✓ համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)
 - ✓ համախառն արտաքին արդյունք (ՀԱԱ)
 - ✓ զուտ ներքին արդյունք (ՋՆԱ)
 - ✓ ազգային եկամուտ(ԱԵ)
 - ✓ անձնական եկամուտ
 - ✓ տնօրինելի եկամուտ

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի 80%-90% ճշտությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն, գծապատկերներ, ինչպես նաև բանաձևային սխեմաներ

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 9. Ծանոթանալ ֆինանսական համակարգի էությանը և տնտեսական աճի ցիկլային բնույթին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ճիշտ է բացատրում ֆինանսների ծագումը, էությունը և ֆինանսական համակարգի օղակները
բ/ ճիշտ է ներկայացնում պետական բյուջեն որպես ֆինանսական համակարգի հիմնական օղակ
գ/ճիշտ է պարզաբանում արժեզրկման էությունը, պատճառները, տեսակները և հետևանքները
դ/ճիշտ է բնութագրում տնտեսական աճի ցիկլային բնույթը, տնտեսական ճգնաժամի էությունը, թվարկում տեսակները և պատճառները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտվում ենք թեստից և իրավիճակային քննարկումից: Վերջինիս ժամանակ ընտրվում է որևէ արդիական մասնագիտական թեմա, օրինակ՝ հետևյալ վերնագրով «21-րդ դարի հիպոթեկային ճգնաժամի պատճառները և հետևանքները», և ուսանողը պետք է նախօրոք մշակված նյութերով ներկայանա լսարան, որպեսզի կարողանա մասնակցել այդ քննարկմանը: Իսկ թեստը պետք է ընդգրկվի առաջադրանքներ, որոնք պահանջում են ընդհանրացված նյութի ըմբռնում:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բացատրել ֆինանսների էությունը, ծագումը և ֆինանսական համակարգի օղակները
- ❖ ներկայացնել պետական բյուջեն՝ որպես ֆինանսական համակարգի կարևորագույն օղակ
- ❖ բնութագրել արժեզրկման էությունը, պատճառները և տեսակները
- ❖ ներկայացնել տնտեսական աճի ցիկլային բնույթը՝ բացատրելով ցիկլի յուրաքանչյուր հատվածը
- ❖ պարզաբանել տնտեսական ճգնաժամի էությունը և առանձնահատկությունները 21-րդ դարի ֆինանսական ճգնաժամի համար:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի 90% ճշտությամբ, իսկ իրավիճակային քննարկման ժամանակ շարադրված մտքերը լինեն գրագետ և տրամաբանորեն հիմնավորված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն, ժամանակակից մասնագիտական ամսագրեր, գծապատկերներ, դագրամաներ, ինչպես նաև ԳՅ պետ բյուջեի օրինակելի տարբերակը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 8 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 10. Ծանոթանալ համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալներին և կառուցվածքին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է բացատրում համաշխարհային տնտեսության ձևավորման հիմքերը և կառուցվածքը

բ/ ճիշտ է պարզաբանում համաշխարհային առևտուրը և համաշխարհային արժույթային հարաբերությունները

գ/ ճիշտ է բնութագրում համաշխարհային ինտեգրացիան և գլոբալիզացիան:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտվում ենք թեստից, որը կբացահայտի ձեռք բերված գիտելիքների մակարդակը և կչափորոշի հիմնական հասկացությունների և օրինաչափությունների իմացությունը:

Ատորև Եներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ Եներկայացնել համաշխարհային տնտեսության ձևավորման հիմքերը և կառուցվածքը
- ❖ Եներկայացնել համաշխարհային առևտրի էությունը
- ❖ Եներկայացնել համաշխարհային արժույթային հարաբերությունները և նրա առանձնահատկությունները
- ❖ բնութագրել համաշխարհային ինտեգրացիան և գլոբալիզացիան:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի 90% ճշտությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական գրականություն, ժամանակակից մասնագիտական ամսագրեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «SPECIAL ENGLISH»

Մոդուլի դասիչը ԲԳՄ-4-09-002

Մոդուլի տևողությունը` 72 ժամ

տեսական ուսուցում 30 ժամ

գործնական պարապումը 42 ժամ

Մոդուլի նպատակը` այս մոդուլն ուսումնասիրելիս ուսանողը պետք է ծանոթանա անգլերեն լեզվով հրատարակվող բանկային, տնտեսագիտական և այլ մասնագիտական գրականությանը և կարողանա օգտվել:

Մուտքային պահանջներ` Չկան

Ուսումնառության արդյունքները`

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա`

ա. “Բանկային գործ” մասնագիտությանը վերաբերող բառարան,

բ. կարդալ և թարգմանել անգլերեն լեզվով հրատարակվող մասնագիտական գրականություն

գ. նամակների և երկխոսությունների միջոցով ծանոթանալ և հասկանալ անգլերեն լեզվով տարվող գործարար թղթակցությունը և նամակագրությունը

դ. ծանոթանալ բանկերի տեսակներին և նրանց գործունեությանը

- ե. ծանոթանալ Կենտրոնական բանկին և նրա գործունեությանը
- զ. ծանոթանալ հաշվապահության հիմունքներին և նրա վերաբերյալ տեքստերի թարգմանությանը
- է. պահպանել քերականական կանոնները թարգմանության մեջ:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Կարողանալ հաղորդակցվել անգլերեն լեզվով բանկային համակարգում կիրառելով բանկային միջազգային հարաբերությունների վերաբերյալ փաստաթղթերը:

ԿԱՏԱՐՄԱՆ 2 ԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է`

- ա. ճիշտ թարգմանություններ կատարել թե բանավոր, թե գրավոր խոսքում
- բ. ճիշտ լրացնել բանկային գործառնություններին վերաբերվող փաստաթղթերը անգլերեն լեզվով, գրել նամակներ և հաղորդակցվել բանկի հաճախորդների հետ:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտվում ենք թեստից և գործնական աշխատանքից: Վերջինիս ժամանակ կտրվեն փաստաթղթեր, որոնք պետք է լրացնեն պատշաճ մակարդակով: Իսկ թեստը կբացահայտի ձեռք բերած գիտելիքների մակարդակը:

Ատորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ կատարել թարգմանություն անգլերենից հայերեն` օգտագործելով ակտիվ բառապաշարը
- ❖ ճիշտ լրացնել տրված փաստաթղթերը անգլերեն լեզվով:
- ❖ տիրապետել «փաստաթղթային» բառապաշարին

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը ճիշտ կատարվի կիսով չափ, իսկ գործնական աշխատանքը` 60% և ավելի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական դասագրքեր, անհրաժեշտ մասնագիտական փաստաթղթեր, ինչպես նաև մասնագիտական բառարաններ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 2. Տարբերել բանկերը, դասակարգել դրանք և ուսումնասիրել վարկերը և նրանց տեսակները անգլերեն լեզվով:

ԿԱՏԱՐՄԱՆ 2 ԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է`

- ա. ճիշտ ներկայացնել բանավոր խոսքը
- բ. երկխոսությունների միջոցով բավարարել հաճախորդի հարցադրումները:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտվում ենք իրավիճակային քննարկումից և թեստից: Վերջինիս միջոցով ստուգվում է ստուգվող նյութի իմացությունը, ինչպես նաև նրա յուրացման աստիճանը և խորությունը: Իրավիճակային քննարկման ժամանակ ուսանողները ձևավորվում են խմբեր, և այդ խմբերում երկխոսությունների միջոցով բացահայտում և բացատրում են միմյանց բանկերի և վարկերի տեսակները՝ օգտագործելով յուրացրած բառապաշարը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ✓ Բանավոր խոսքի միջոցով ներկայացնել բանկերի և վարկերի դասակարգումը
- ✓ մշակել հարցադրումների մի շարք, որը կկիրառվի հաճախորդ վարկատու հարաբերությունների ժամանակ
- ✓ մշակել պատասխանների մի շարք, որը կբավարարի առաջացած հարցադրումները

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, երբ իրավիճակային քննարկման ժամանակ՝ օգտագործելով ակտիվ բառապաշարը, շարադրված միտքը արտահայտվի գրագետ և ունենա քերականորեն ճիշտ կազմություն: Իսկ թեստը պատասխանվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական դասագրքեր, անհրաժեշտ մասնագիտական փաստաթղթեր, ինչպես նաև մասնագիտական բառարաններ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 3. Ներկայացնել պահանջված փաստաթղթերը անգլերեն լեզվով և կարողանալ հաճախորդին բացատրել դրանց լրացման կարգը, բնութագրել բանկի կամ տվյալ կազմակերպության աշխատանքի սկզբունքները և նրանց ներկայացվող պահանջները:

ԿԱՏԱՐՄԱՆ 2 ԱՓՎՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

- ա. ճիշտ կարդալ և արտասանել բանկային տերմինները
- բ. ճիշտ ներկայացնել տեքստի թարգմանությունը և հարցերին պատասխանել
- գ. ճիշտ լրացնել բանկային նամակների թարգմանչական պահանջները
- դ. ճիշտ կողմնորոշվել բանկային երկխոսությունների մեջ:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումն իրականացնելու է հարցման միջոցով: Հարցման ժամանակ տրվում են մասնագիտական տեքստեր և փաստաթղթեր, ուսանողը պետք է ճիշտ արտասանի բանկային տերմինները, թարգմանի տրված տեքստը և ճիշտ պատասխանի հարցերին:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ✓ պետք է մշակել բանկային տերմինների մի խումբ, որոնք առավել շատ են օգտագործվում բանկային փաստաթղթերի ձևակերպման ժամանակ
- ✓ ներկայացնել մասնագիտական թեմայով որևէ տեքստ, որպեսզի այն կարդան և թարգմանեն:
- ✓ առաջարկել բանկային նամակների որոշ տարբերակներ՝ դրանք թարգմանելու նպատակով

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, երբ ուսանողը տրված տեքստը ճիշտ կարդա, թարգմանի և մասամբ էլ պատասխանի հարցերին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական դասագրքեր, անհրաժեշտ մասնագիտական փաստաթղթեր, ինչպես նաև լսողական անգլերենը զարգացնելու միջոցներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 4. Ներկայացնել տնտեսագիտության կապը և անհրաժեշտությունը բանկային համակարգում:

ԿԱՏԱՐՄԱՆ 2 ԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ յուրացնել տնտեսագիտական միմիմալ բառարանը

բ. ճիշտ կատարել իրեն հետաքրքրող հարցադրումները և ստանալ պատասխանները

գ. ճիշտ ներկայացնել բառակապակցությունները և նրանց երկակի ընկալումը տնտեսագիտական թարգմանության ժամանակ

դ. ճիշտ տալ մասնագիտական տերմինների և կապակցությունների դասակարգումը:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացնում ենք իրավիճակային քննարկման և թեստի միջոցով: Իրավիճակային քննակման ժամանակ առաջադրվում է որևէ մասնագիտական քննարկման ենթակա իրավիճակ, որի ժամանակ ուսանողը պետք է օգտագործի մասնագիտական բառակապակցություններ իրենց երկակի իմաստներով, մասնագիտական տերմիններ, ինչպես նաև հարցադրումներ և պատասխաններ: Իսկ թեստը պետք ըղգրկի առաջադրանքներ, որոնք պահանջում են ընդհանրացված նյութի ըմբռնում:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել տնտեսագիտական թարգմանության ժամանակ կիրառվող բառակապակցություններ և նրանց երկակի ընկալումը
- ❖ ներկայացնել հարցադրումների ճիշտ կազմությունը և դրանց պատասխանելու ճիշտ տարբերակները
- ❖ ներկայացնել մասնագիտական տերմինների և կապակցությունների դասակարգումը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի կիսով չափ ճիշտ, իսկ իրավիճակային քննարկման ժամանակ օգտագործվող բառակապակցությունները գործածվեն իրենց ճիշտ իմաստներով, իսկ հարցադրումները և պատասխանները լինեն քերականորեն ճիշտ ձևակերպված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական դասագրքեր, իրավիճակային քննարկման նյութեր, ինչպես նաև մասնագիտական բառարաններ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 5. Իմանալ բանկերի տեսակները Մեծ Բրիտանիայում և նրանց գործառույթները:

ԿԱՏԱՐՄԱՆ 2 ԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

- ա. ճիշտ կազմել իր սեփական տնտեսագիտական բառարանը
- բ. ճիշտ կազմել իր սեփական բանկային բառարանը
- գ. ճիշտ ներկայացնել իր մտքերը մասնագիտական տեքստերի վերաբերյալ
- դ. ճիշտ ներկայացնել գործառույթները բանկերում:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումն իրականացնելու է հարցման և թեստի միջոցով: Հարցման ժամանակ առաջարկվում է որևէ մասնագիտական տեքստ, որում ներկայացվում է Մեծ Բրիտանիայի բանկերը և նրանց գործառույթները, պետք է ճիշտ կարդալ և թարգմանել այն: Իսկ թեստը կբացահայտի այդ արդյունքում ձեռք բերած գիտելիքների մակարդակը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ✓ առաջարկել տեքստերի շարք, որոնք կներառեն Մեծ Բրիտանիայի բանկերը և նրանց գործառույթները
- ✓ առաջարկել մտքեր և հարցադրումներ տրված տեքստերի վերաբերյալ
- ✓ ներկայացնել բանկերի գործառույթները անգլերեն լեզվով

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, երբ ուսանողը տրված տեքստը ճիշտ կարդա, թարգմանի, իսկ թեստը կատարվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական դասագրքեր, անհրաժեշտ մասնագիտական փաստաթղթեր, ինչպես նաև լսողական անգլերենը զարգացնելու միջոցներ և տեսաերիզներ Մեծ Բրիտանիայի բանկային համակարգի վերաբերյալ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 6. Իմանալ տերմինային և ընդհանուր գործածության բառապաշարի թարգմանությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ 2 ԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

- ա. ճիշտ բացատրել տրված մոդելները և կազմել ինքնուրույն իրավիճակներ
- բ. ճիշտ ստուգել և ամրապնդել տեքստերի ակտիվ բառապաշարը
- գ. ճիշտ պատկերացնել տերմիններն ու քերականական նյութերը
- դ. ճիշտ բացատրել և զարգացնել բանավոր խոսքը:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումն իրականացնելու է իրավիճակային քննարկման միջոցով, որի ժամանակ տրվում է որևէ տնտեսագիտական թեմա, ուսանողները պետք է երկխոսության մեջ մտնեն՝ օգտագործելով ակտիվ բառապաշարը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ✓ ներկայացնել քերականական նյութեր, որոնք կօգնեն ավելի հեշտ հաղորդակցվել երկխոսությունների ժամանակ
- ✓ լսել ակտիվ բառապաշարով համալրված մասնագիտական տեքստեր
- ✓ առաջարկել ակտիվ բառապաշար՝ իրենց արտասանությամբ և թարգմանությամբ

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, երբ ուսանողը քննարկման ժամանակ օգտագործի ակտիվ բառապաշարը և գրագետ շարադրի երկխոսության հարցադրումները և պատասխանները

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական դասագրքեր, անհրաժեշտ մասնագիտական փաստաթղթեր, ինչպես նաև լսողական անգլերենը զարգացնելու միջոցներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 7. Իմանալ Հայաստանի բանկային համակարգը:

ԿԱՏԱՐՄԱՆ 2 ԱՓՎՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

- ա. ճիշտ բացատրել գործարար թեմաներով հարցազրույցներ
- բ. ճիշտ ներկայացնել դրամի սահմանումը և դրամի գործառույթները
- գ. ճիշտ բացատրել մարկետինգի և միջազգային առևտրի պահանջները
- դ. ճիշտ ներկայացնել բիզնեսին վերաբերող նամակներն ու երկխոսությունները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումն իրականացվելու է իրավիճակային քննարկման և թեստի միջոցով: Վերջինս պետք է հիմնական չափորոշի հիմնական սահմանումների, հասկացությունների, օրինաչափությունների և այլնի իմացությունը: Իսկ իրավիճակային քննարկման ժամանակ երկխոսություն է կազմակերպվում ՀՀ որևէ բանկի գործունեության շուրջ՝ օգտագործելով ակտիվ բառապաշարը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել դրամի սահմանումը, և գործառույթները
- ❖ ներկայացնել ՀՀ-ի բանկային համակարգում կիրառվող նամակներն ու փաստաթղթերը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, երբ ուսանողը քննարկման ժամանակ օգտագործի ակտիվ բառապաշարը և գրագետ շարադրի երկխոսության հարցադրումները և պատասխանները, իսկ թեստը կատարվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործվում է մասնագիտական դասագրքեր, անհրաժեշտ մասնագիտական փաստաթղթեր, ինչպես նաև լսողական անգլերենը զարգացնելու միջոցներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 12 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապումը 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՆԸ` «ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»

Մոդուլի դասիչը ԲԳՄ-4-09-003

Մոդուլի տևողությունը` 108 ժամ:

տեսական ուսուցում 34 ժամ

գործնական պարապումը 74 ժամ

Մոդուլի նպատակը` ուսանողին տրամադրել գիտելիքներ, որով նա կարողանա հաշվարկել, գնահատել և վերլուծել ֆինանսական մասնավորապես բանկային և արժեթղթերով գործառնությունները, կատարել գործարարական առաջարկների և կազմակերպությունների ֆինանսական վիճակի պարզ վերլուծություն:

Մուտքային պահանջները` Չկան:

Ուսումնառության արդյունքները.

1. իմանա մաթեմատիկական վերլուծությունների տեսության հիմունքները, մոտավոր հաշվարկների եղանակները և կարողանա կիրառել նրանց ֆինանսական վերլուծության մեջ,
2. իմանա ֆինանսային մաթեմատիկայի հիմունքները և տոկոսների տեսությունը,
3. պատկերացնի դրամական հոսքերը, նրանց հաշվարկները, գնահատումը և վերլուծությունը,
4. կարողանա կատարել վարկային գործառնություններում անհրաժեշտ հաշվարկները և կազմել տարբեր տեսակի վարկերի մարման պլանները,
5. կարողանա հաշվարկել ֆինանսավարկային գործառնությունների եկամտաբերությունը,
6. կարողանա հաշվարկներում հաշվի առնել սղաճի առկայությունը և հաշվել ազգային արժույթի արժեզրկումը,
7. կարողանա կատարել արժեթղթերի գնահատում և շահութաբերության որոշում,
8. կարողանա վերլուծել գործարարական առաջարկները և հաշվարկել նրանց եկամտաբերությունը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ մոտավոր հաշվարկների կիրառման հմտությունը ֆինանսական հաշվարկների և վերլուծության մեջ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը`

ա. գիտի մոտավոր հաշվարկների գծային ինտերպոլացիայի եղանակը

բ. գիտի մոտավոր հաշվարկների իտեռացիաների եղանակը:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատումն իրականացվելու է խնդրի մջջոցով, որի լուծումը պահանջում է ընդհանրացված նյութի ըմբռնում:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ✓ ներկայացնել մոտավոր հաշվարկների գծային ինտերպոլացիայի եղանակը

✓ ներկայացնել մոտավոր հաշվարկների ինտեռացիաների եղանակը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե տրված խնդրի լուծումներում ճիշտ օգտագործվի մոտավոր հաշվարկների համապատասխան եղանակները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և համապատասխան խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 14 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 8 ժամ

Արդյունք 2. Ծանոթանալ ֆինանսային մաթեմատիկայի հիմունքների և տոկոսների տեսության իմացություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ .

ուսանողը՝

ա. ունի տոկոսների տեսության իմացություն

բ. ճիշտ է կատարում պարզ և բարդ տոկոսադրույքների հաշվարկը

գ. գիտի հաշվառման (դիսկոնտավորման) տոկոսադրույքները

դ. գիտի իրական տոկոսադրույքների որոշումը սղաճից և հարկից կախված:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումն իրականացվելու է խնդրի և թեստի միջոցով: Այս թեստը պետք է չափորաչի հիմնական բանաձևերի (տոկոսադրույքի հաշվարկման բանաձևեր), հասկացությունների և օրինաչափությունների և այլնի իմացությունը: Իսկ խնդիրները պետք է ներառեն պարզ, բարդ, դիսկոնտային հաշվարկներ:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ✓ ներկայացնել տոկոսների տեսությունը
- ✓ ներկայացնել պարզ և բարդ տոկոսադրույքների հաշվարկը
- ✓ ներկայացնել դիսկոնտավորման տոկոսադրույքները

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, թեստը կատարվի կիսով չափ ճիշտ, իսկ խնդիրը լուծվի ամբերի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և համապատասխան խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 14 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 10 ժամ

Արդյունք 3. Ծանոթանալ դրամական հոսքերի, նրանց գնահատման և վերլուծության հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ .

ուսանողը՝

ա. ունի պարբերական անդամներով ֆինանսական հոսքերի ռենտաների հետ կապված կարևորագույն մեծությունների հաշվարկներ կատարելու կարողություն

բ. ունի ներհոսող (միջոցների շրջանառությունից) և արտահոսող (ծախսերը, ներդրումները և այլ վճարային պարտավորությունները) գումարները որոշելու կարողություն:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտվում ենք թեստից, որը հնարավորություն է ընձեռնում պարամետրերի որոշման կարողություններ, որոնք անհրաժեշտ են տրված մեծություններով առաջադրված ֆինանսական խնդիրների լուծման համար:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել պարբերական անդամներով ֆինանսական հոսքերի հետ` կարևորագույն ցուցանիշներ
 - ✓ կուտակային հաշիվներ
 - ✓ ընթացիկ հաշիվներ
 - ❖ ներկայացնել ներհոսող և արտահոսող գումարները որոշելու կարողություններ
- Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, թեստը կատարվի կիսով չափ ճիշտ,

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և համապատասխան խնդրագրքեր և գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 14 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 10 ժամ

Արդյունք 4. Կատարել վարկային գործառնությունների հաշվարկներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ .

ուսանողը`

ա. ճիշտ է կատարում անուիտետների հաշվարկը բարդ տոկոսներով

բ. ճիշտ է կատարում երկարաժամկետ վարկերի հետ կապված հաշվարկներ

գ. ճիշտ է կազմում տարբեր տեսակի վարկերի տարբեր եղանակներով մարման պլանները:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատուտելու համար օգտվում ենք մասնագիտական խնդիրներից, որոնք պետք է ստուգեն ստուգվող նյութի իմացությունը, ինչպես նաև նրա յուրացման աստիճանի խորությունը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ Կատարել անուիտետների հաշվարկ բարդ տոկոսներով
- ❖ կատարել երկարաժամկետ վարկերի հետ կապված հաշվարկը
- ❖ կազմել տարբեր տեսակի վարկերի (հպոթեկային, լիզինգային, ֆակտորինգային) մարման պլանները:

Արդյունքի ուսուցումը դրական կհամարվի, եթե խնդիրը ունենա ճիշտ ընթացք և եզրահանգի տրամաբանական լուծմանը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և համապատասխան խնդրագրքեր, գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 14 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապուներ 10 ժամ

Արդյունք 5. Լուծել ֆինանսավարկային գործառնությունների հաշվեկշռային հավասարումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ուսանողը՝

ա. ճիշտ է կիրառում ֆինանսական համարժեքության սկզբունքը

բ. ճիշտ է լուծում հաշվեկշռային հավասարումները

գ. ճիշտ է կատարում ֆինանսական գործառնությունների եկամտաբերության հաշվարկը:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատուտումը իրականացնում ենք թեստի և խնդրի միջոցով: Այս խնդրի մեջ առաջադրված պարամետրերով պետք է լուծել հաշվեկշռային հավասարումները, իսկ թեստը պետք է բացահայտի ձեռք բերած գիտելիքների մակարդակը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ Ներկայացնել և ճիշտ կիրառել ֆինանսական համարժեքության սկզբունքը
- ❖ Լուծել հաշվեկշռային հավասարումները
- ❖ Կատարել ֆինանսական գործառնությունների եկամտաբերության հաշվարկը:

Արդյունքի ուսուցումը դրական կհամարվի, եթե խնդիրը լուծվի անսխալ, իսկ թեստը պատասխանվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և համապատասխան խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 12 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապուներ 8 ժամ

Արդյունք 6. Ծանոթանալ սղաճի առկայության դեպքում ֆինանսական հաշվարկների իրականացման հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում սղաճի ինդեքսի և տեմպի հաշվարկները և նրանց կապը ազգային արժույթի արժեզրկման ինդեքսի և տեմպի հետ

բ. ճիշտ է կատարում ռենտաների հաշվարկները սղաճի առկայության դեպքում

գ. ճիշտ է կատարում եկամտաբերության հաշվարկը սղաճի առկայության դեպքում:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատուտումը իրականացնում ենք խնդիրների միջոցով, որոնք բանաձևերի ճիշտ կիրառման և հաշվարկման հետևանքով կբացահայտեն ձեռք բերած գիտելիքների մակարդակը

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ սղաճի ինդեքսի և տեմպի հաշվարկման կարգը:
- ❖ Կատարել ռենտաների հաշվարկ սղաճի առկայության դեպքում
- ❖ Կատարել եկամտաբերության սղաճի առկայության դեպքում

Արդյունքի ուսուցումը դրական կհամարվի, եթե խնդիրների լուծումը իրականացվի տրամաբանորեն հիմնավորված և բանաձևերին համապատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և համապատասխան խնդրագրքեր, ինչպես նաև դիագրամներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 14 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապունք 8 ժամ

Արդյունք 7. Կատարել արժեթղթերի գնահատում և շահութաբերության որոշում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա.գիտի տարբեր տեսակի արժեթղթերի փոխարժեքների հաշվարկը

բ.ունի արժեթղթերով գործարքներ կատարելիս ճիշտ կողմնորոշվելու ունակություն, ելնելով նրանց գնահատման և շահութաբերության ֆինանսական ցուցանիշներից

բ.ունի արժեթղթերի հիմնական պարամետրերի իմացություն և դրանց գնահատման ցուցանիշների հաշվարկներում օգտագործելու կարողություն

գ.ունի ներդրումային ծրագրերի արդյունավետությունը որոշելու և այն անհրաժեշտ հաշվարկներով հիմնավորելու կարողություն:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացնում ենք թեստի միջոցով, որը պետք է չափորոշի հիմնական հասկացությունների, բանաձևերի, օրինաչափություններին և այլնի իմացությունը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ արժեթղթերի շուկայի բուն էությունը և տարբեր տեսակի արժեթղթերի փոխարժեքների հաշվարկը:
- ❖ արժեթղթերի հիմնական պարամետրերը, որոնց միջոցով իրականացվում են դրանց գնահատման հաշվարկները: Այդ պարամետրերն են.
 - ✓ պարտատոմսի նոմինալ արժեքը (N)
 - ✓ պարտատոմսի մարման ժամկետը (T)
 - ✓ պարտատոմսի տոկոսադրույքը և նրա վճարման ամսաթիվը (i)

Արդյունքի ուսուցումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի կիսով չափ ճիշտ :

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, բանաձևերը համախմբող սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 14 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 10 ժամ

Արդյունք 8. Իմանալ գործարարական առաջարկների վերլուծությունը և հաշվարկները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ուսանողը՝

ա. գիտի ներդրումային նախագծերի վերլուծության ստատիկ և դինամիկ պարամետրերը

բ. ունի ներդրումային ծրագրերի արդյունավետությունը որոշելու և այն անհրաժեշտ հաշվարկներով

հիմնավորելու կարողություն:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվում է «կանխատեսումային» թեստի միջոցով: Այս թեստը լուծելիս ուսանողները թեմային ուսումնասիրման ժամանակ արդեն ձեռք բերած լինելով որոշակի գիտելիքներ, ընդհանրացնում և տաղափոխում են դրանք նոր իրենց համար անծանոթ իրավիճակներ:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ Ներկայացնել ներդրումային վերլուծության ստատիկ և դինամիկ պարամետրերը
- ❖ Ներկայացնել ներդրումային ծրագրի արդյունավետությունը որոշելու միջոցները:

Արդյունքի ուսուցումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի կիսով չափ ճիշտ :

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, բանաձևերը համախմբող սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 12 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԿԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ԲԳՄ-4-09-004

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

տեսական ուսուցում 24 ժամ

գործնական պարապունք 12 ժամ

Մոդուլի նպատակը՝ ծանոթացնել ուսանողներին վիճակագրական մեթոդների և հնարքների հետ: Ուսումնասիրվող երևույթի մեծություն բնութագրող ինֆորմացիան հավաքագրվում է վիճակագրական դիտարկումների օգնությամբ, նրա մշակումը իրականացվում է ամփոփման և խմբավորման գործընթացում, որի արդյունքները աղյուսակների բաշխման շարքերի և գրաֆիկների տեսքով **Աաներկայացվում են** վերադաս մարմիններին: Հետագայում դրանք ենթարկվում են վերլուծման, որը հնարավորություն է տալու բացահայտել ուսումնասիրվող երևույթի զարգացման օրինաչափությունները:

Մուտքային պահանջները՝ տնտեսագիտության տեսության հիմունքներ՝ ԲԳՄ-4-09-001 , և ֆինանսային մաթեմատիկա՝ ԲԳՄ-4-09-003 մոդուլների իմացություն:

Ուսումնառության արդյունքները՝

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա՝

1. վիճակագրություն առարկան, մեթոդը և խնդիրները
2. վիճակագրական դիտարկում, խմբավորում և բաշխման շարքեր
3. բացարձակ և հարաբերական մեծություններ
4. միջին մեծություններ և վարիացիայի ցուցանիշներ
5. դինամիկայի շարքեր և տնտեսական ինդեքսներ
6. ընտրամքային դիտարկումներ

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ծանոթանալ վիճակագրություն առարկային, մեթոդին և խնդիրներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. գիտի «վիճակագրության հիմունքներ» առարկան և նրա դերը հասարակական կյանքի զարգացման օրինաչափությունների ճանաչողության մեջ

բ. գիտի քանակական և որակական վերլուծության փոխկապակցությունը վիճակագրության մեջ

գ. գիտի վիճակագրության մեթոդը և նրա առանձնահատկությունները

դ. գիտի վիճակագրական հետազոտման հիմնական փուլերը

ե. գիտի վիճակագրության հիմնական ֆունկցիաները և նրա խնդիրները շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման ժամանակաշրջանում:

Գնահատման միջոց՝

Արդյունքը գնահատելու համար նպատակահարմար է կիրառել գծապատկերային թեստ, որի լուծման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը ամփոփված է սխեմայի, գծապատկերների տրամաբանված վերլուծության մեջ: Թեստը պետք է ներառի վիճակագրության մեջ որակական և քանակական վերլուծության փոխկապակցությունը, վիճակագրության հիմնական ֆունկցիաները, հետազոտման հիմնական փուլերը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ «վիճակագրության հիմունքներ» առարկան, նրա մեթոդները և առանձնահատկությունները
- ❖ քանակական և որակական վերլուծության փոխկապակցվածությունը
- ❖ վիճակագրության հիմնական ֆունկցիաները և խնդիրները

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե առաջադրված թեստին ուսանողը տվել է բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, սխեմաներ, գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 2. Ծանոթանալ վիճակագրական դիտարկման, խմբավորման և բաշխման շարքերի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

- ա. գիտի դիտարկումը որպես վիճակագրական հետազոտության սկզբնական փուլ
- բ. գիտի դիտարկման ծրագիրը, օբյեկտը և միավորը
- գ. գիտի վիճակագրական հաշվետվությունների ձևերը, դրանց տեսակները և ներկայացման ժամկետները
- դ. գիտի խմբավորման մեթոդը
- ե. գիտի խմբավորման հատկանիշների տեսակները, խմբերի թվի և խմբավորման միջակայքի որոշումը,
- զ. գիտի բաշխման շարքերը, դրանց կառուցումը ըստ որակական և քանակական հատկանիշների, ինչպես նաև գիտի բաշխման շարքերի գրաֆիկները

Գնահատման միջոց՝

Արդյունքը գնահատելիս հիմք ընդունել թեստը, որը ընդգրկում է դիտարկման ծրագիրը, փուլը, խմբավորման մեթոդը, հատկանիշների տեսակները, բաշխման շարքերի կառուցումը:

Հարց ու պատասխանով պարզել ուսանողի գիտելիքները վիճակագրական հաշվետվությունների ձևերի, տեսակների և ներկայացման ժամկետների մասին:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ դիտարկումը որպես վիճակագրական հետազոտության սկզբնական փուլ
- ❖ դիտարկման ծրագիրը, օբյեկտ և միավոր
- ❖ խմբավորման մեթոդը, խմբերի թիվը բաշխման շարքեր
- ❖ վիճակագրական հաշվետվությունների ձևերը և ներկայացման ժամկետները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը թեստի հարցերին տալիս է բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, սխեմաներ, գծապատկերներ, հաշվետվության ձևեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 3. Բնութագրել բացարձակ և հարաբերական մեծությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

- ա. գիտի բացարձակ մեծությունների տեսակները, չափի միավորները և նշանակությունը վիճակագրական հետազոտություններում
- բ. գիտի հարաբերական մեծությունների նշանակությունը, տեսակները և արտահայտման ձևերը:

Գնահատման միջոց՝

Արդյունքը գնահատելիս նպատակահարմար է օգտագործել թեստ, որը ընդգրկի բացարձակ մեծությունների տեսակները, չափի միավորներ, հարաբերական մեծությունների տեսակները և արտահայտման ձևերը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բացարձակ մեծությունների տեսակները, չափի միավորները
- ❖ հարաբերական մեծությունների տեսակները, դրանց արտահայտման ձևերը
- ❖ բացարձակ և հարաբերական մեծությունների նշանակությունը վիճակագրական հետազոտություններում:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե թեստի բոլոր հարցերին տրվի սպառնիչ պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, բանաձևերը համախմբող սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապուներ 2 ժամ

Արդյունք 4. Ծանոթանալ միջին մեծությունների և վարիացիայի ցուցանիշների հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. գիտի միջին մեծությունների մեթոդը

բ. գիտի միջինի տեսակները և նրա ընտրության եղանակները

գ. գիտի ընդհանուր և մասնակի միջինները և նրանց հիմնական մաթեմատիկական հատկությունները

դ. գիտի միջին կշիռների նշանակությունը

ե. գիտի վարիացիայի հիմնական ցուցանիշները և դրանց օգտագործումը:

Գնահատման միջոց՝

Արդյունքը գնահատումը իրականացնում ենք թեստ միջոցով, որը կչափորոշի ուսանողի իմացությունը միջին մեծությունների մեթոդի, ընդհանուր և մասնակի միջինների, միջին կշիռների, վարիացիայի հիմնական ցուցանիշների հասկացությունների օրինաչափությունների իմացությունը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ միջին մեծությունների մեթոդը
- ❖ միջինի տեսակները և նրա ընտրության եղանակները
- ❖ ընդհանուր և մասնակի միջիններ
- ❖ միջին կշիռներ և վարիացիայի ցուցանիշներ:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե թեստին ուսանողը տա բավարար պատասխաններ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, բանաձևերը համախմբող սխեմաներ և գծապատկերներ

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 5. Ներկայացնել դինամիկայի շարքերը և տնտեսական ինդեքսները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. գիտի դինամիկայի շարքի տարրերն ու տեսակները

բ. գիտի շարքի միջին և վերլուծական ցուցանիշները

գ. գիտի վիճակագրական հետազոտությունների ինդեքսային մեթոդը

դ. գիտի անհատական, ընդհանուր, ագրեգատային, միջին թվաբանական և ներդաշնակ ինդեքսներ

ե. գիտի կարևորագույն տնտեսական ինդեքսները և նրանց փոխկապակցվածությունը:

Գնահատման միջոց՝

Արդյունքը կարելի է գնահատել թեստի միջոցով, որը կբացահայտի ուսանողի ձեռք բերած գիտելիքների մակարդակը: Թեստը պետք է ներառի դինամիկայի շարքերի տարրերի և տեսակների, ինդեքսների և նրա տեսակների վերաբերյալ:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ դինամիկայի շարքերը, տարրերը և տեսակները
- ❖ միջին և վերլուծական ցուցանիշներ
- ❖ վիճակագրական հետազոտությունների ինդեքսների տեսակները և դրանց փոխկապակցվածությունը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը թեստի բոլոր հարցերին տալիս է բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, բանաձևերը համախմբող սխեմաներ և մասնագիտական խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 6. Ծանոթանալ ընտրանքային դիտարկումներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. գիտի ընտրանքային դիտարկումը

բ. գիտի ընտրանքային դիտարկման տեսակները և սխալները:

Գնահատման միջոց՝

Արդյունքը կարելի է գնահատել թեստի միջոցով, որը կբացահայտի ուսանողի ձեռք բերած գիտելիքների մակարդակը: Թեստը պետք է ներառի դինամիկայի շարքերի տարրերի և տեսակների, ինդեքսների և նրա տեսակների վերաբերյալ:

Ատորև Գերկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ դինամիկայի շարքերը, տարրերը և տեսակները
- ❖ միջին և վերլուծական ցուցանիշներ
- ❖ վիճակագրական հետազոտությունների ինդեքսների տեսակները և դրանց փոխկապակցվածությունը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը թեստի բոլոր հարցերին տալիս է բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, բանաձևերը համախմբող սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը` ԲԳՄ-4-09-005

Մոդուլի տևողությունը` 36 ժամ

տեսական ուսուցում 17 ժամ

գործնական պարապումը 19 ժամ

Մոդուլի նպատակը` տրամադրել ուսանողին ՀՀ հարկային օրենսդրության վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, որը հնարավորություն կտա ուսանողին մասնագիտական գործունեությունը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

Մուտքային պահանջները` տնտեսագիտության տեսության հիմունքներ` ԲԳՄ-4-09-001

Ուսումնառության արդյունքները.

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա`

1. Հարկային օրենսդրության հիմունքները և սկզբունքները:
2. ՀՀ գործող հարկային ռեժիմները և հարկատեսակները:
3. «Շահութահարկի մասին » օրենքը:
4. « Եկամտահարկի մասին » օրենքը:
5. « Ավելացված արժեքի հարկի մասին » օրենքը:
6. «Ակցիզային հարկի մասին » օրենքը:
7. « Գույքահարկի մասին » օրենքը:
8. « Հողի հարկի մասին » օրենքը:
9. Սոցիալական և պարտադիր այլ վճարներ:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ծանոթանալ հարկային օրենսդրության հիմունքներին և սկզբունքներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. գիտի «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանվող Հայաստանի Հանրապետությունում հարկ, հարկային գործակալ հասկացությունները,

բ. ճիշտ է ներկայացնում հարկերի և հարկային արտոնությունների տեսակները, հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները, հարկային վեճերի լուծման կարգը, ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական պահանջների խախտումների համար պատասխանատվությունը

գ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի հիմքում դրված սկզբունքների էությունը՝ հարկի վճարման կանոսկրության սկզբունք, հարկադրանքի սկզբունք, հարկային համակարգի կանխատեսելիության սկզբունք, արդարության սկզբունք:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով պետք է չափորոշի հիմնական հասկացությունների, օրինաչափությունների և այլնի իմացությունը:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ հարկային մի շարք հասկացություններ
- ❖ հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները
- ❖ հարկային վեճերի լուծման կարգը
- ❖ հարկային համակարգում դրված սկզբունքների էությունը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե հարց ու պատասխանի ժամանակ գրագետ ձևակերպվեն և ներկայացվեն հարկային օրենսդրության առանցքային հասկացությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ հարկային գերատեսչական տեղեկագրեր և սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 2 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումը -----ժամ

Արդյունք 2. Իմանալ ՀՀ գործող հարկային ռեժիմները և հարկատեսակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ուսանողը՝

ա. ճիշտ է բնութագրում ՀՀ-ում գործող հարկման ռեժիմները՝ ընդհանուր հարկման ռեժիմ և հաստատագրված վճարով հարկման ռեժիմ

բ. ճիշտ է ներկայացնում ՀՀ հարկատեսակների՝ շահութահարկի, եկամտահարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի, հողի հարկի էությունը
գ. գիտի հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը
դ. ճիշտ է կիրառում հաստատագրված վճարի դրույքաչափերը
ե. ճիշտ է իրականացնում հաշվառումը սահմանված դրույքաչափերով:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվում է հարց ու պատասխանի և թեստի միջոցով: Այս թեստի միջոցով ստուգվում է ստուգվող նյութի իմացությունը, ինչպես նաև նրա յուրացման աստիճանը, խորությունը: Այստեղ հարց ու պատասխանը հարկերի տեսակների, դրույքաչափերի վերաբերյալ կլինի թռուցիկ, քանի որ մյուս բոլոր արդյունքներում դրանք մանրամասնորեն քննարկելու ենք:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ ՀՀ -ում գործող հարկման ռեժիմներ
- ❖ ՀՀ- ում շրջանառվող հարկատեսակները և դրույքաչափերը
- ❖ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը և սահմանված դրույքաչափերը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի անսխալ և հարց ու պատասխանը հնարավորինս գրագետ շարադրված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ հարկային գերատեսչական տեղեկագրեր, հարկային ուղեցույցներ և գծապատկերներ

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 3. Ծանոթանալ «Շահութահարկի մասին» օրենքին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ուսանողը՝

- ա. ճիշտ է սահմանում շահութահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները
- բ. ճիշտ է որոշում հարկվող շահույթը
- գ. ճիշտ է կիրառում նվազեցումները և դրույքաչափերը
- դ. գիտի արտոնությունները, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հարկման առանձնահատկությունները
- ե. ճիշտ է ներկայացնում շահութահարկի հաշվարկները:

Գնահատման միջոց՝

Այս արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի և խնդրի լուծման միջոցով: Թեստում կնշվեն շահութահարկ վճարողներ, չվճարողներ, շահութահարկի օբյեկտներ, շահութահարկին վերաբերող և չվերաբերող արտոնություններ. պետք է ընտրել ճիշտ տարբերակը: Իսկ խնդրի էությունն կկայանա հետևյալում. առաջադրված խնդրի պայմաններին համապատասխան որոշել հարկվող շահույթը, հաշվարկել շահութահարկը՝ կիրառելով ճիշտ դրույքաչափը, եթե կան նվազեցումներ ապա հաշվի առնել նաև դրանք:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ սահմանել շահութահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները
- ❖ որոշել հարկվող շահույթը
- ❖ ուսումնասիրել շահութահարկի նվազեցումները, դրույքաչափերը, արտոնությունները և շահութահարկի հաշվարկը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե խնդիրը լուծեն անսխալ և թեստը պատասխանեն կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ հարկային գերատեսչական տեղեկագրեր, հարկային ուղեցույցներ և գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումը 4 ժամ

Արդյունք 4. Ծանոթանալ «Եկամտահարկի մասին» օրենքին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ուսանողը կարողանում է՝

- ա. ճիշտ սահմանել եկամտահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները
- բ. ճիշտ որոշել հարկվող եկամուտը
- գ. ճիշտ կիրառել նվազեցումները և դրույքաչափերը
- դ. ճիշտ ներկայացնել արտոնությունները, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների, անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հարկման առանձնահատկությունները
- ե. ճիշտ ներկայացնել եկամտահարկի հաշվարկները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի և խնդրի լուծման միջոցով: Թեստում կնշվեն եկամտահարկ վճարողներ, չվճարողներ, եկամտահարկի օբյեկտներ, եկամտահարկին վերաբերող և չվերաբերող արտոնություններ. պետք է ընտրել ճիշտ տարբերակը: Իսկ խնդրի էությունն կկայանա հետևյալում. առաջադրված խնդրի պայմաններին համապատասխան որոշել հարկվող եկամուտը, հաշվարկել եկամտահարկը՝ կիրառելով ճիշտ դրույքաչափային սանդղակը, եթե կան նվազեցումներ ապա հաշվի առնել նաև դրանք:

Ստորև ներկայագնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ սահմանել եկամտահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները
- ❖ որոշել հարկվող եկամուտը
- ❖ ուսումնասիրել եկամտահարկի նվազեցումները, դրույքաչափերը, արտոնությունները և եկամտահարկի հաշվարկը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե խնդիրը լուծվի անսխալ և թեստին պատասխանվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ հարկային գերատեսչական տեղեկագրեր, հարկային ուղեցույցներ և գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 5. Ծանոթանալ «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենք:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ/

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ սահմանել ԱԱՀ վճարողներին, հարկվող, չհարկվող և հարկից ազատված գործարքներին

բ. ճիշտ որոշել հարկվող շրջանառությունը

գ. ճիշտ կիրառել դրույքաչափերը

դ. ճիշտ իրականացնել հարկի հաշվեգրումը և հաշվանցումը

ե. ճիշտ ներկայացնել ԱԱՀ հաշվարկները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի և խնդրի լուծման միջոցով: Թեստում կնշվեն ԱԱՀ վճարողները, չվճարողները, հարկվող, չհարկվող և հարկից ազատված ու չազատված գործարքները. պետք է ընտրել ճիշտ տարբերակը: Իսկ խնդրի էությունն կկայանա հետևյալում. տրված խնդրի պայմաններին համապատասխան որոշել հարկվող շրջանառությունը, իրականացնել հարկի հաշվեգրում և հաշվանցում, կիրառել ճիշտ դրույքաչափը:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ սահմանել ԱԱՀ վճարողներին, հարկվող, չհարկվող և հարկից ազատված գործարքներին
- ❖ որոշել հարկվող շրջանառությունը
- ❖ իրականացնել ԱԱՀ հաշվեգրում և հաշվանցում՝ կիրառելով ճիշտ դրույքաչափերը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե խնդիրը լուծեն անսխալ և թեստին պատասխանեն կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ հարկային գերատեսչական տեղեկագրեր, հարկային ուղեցույցներ և գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 6. Ծանոթանալ «Ակցիզային հարկի մասին» օրենքին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ սահմանել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները և հարկ վճարողներին

բ. ճիշտ բնութագրել ակցիզային հարկով հարկման օբյեկտը և բազան

գ. ճիշտ կիրառել դրույքաչափերը և արտոնությունները

դ. ճիշտ իրականացնել ակցիզային հարկի մասով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը, հարկի հաշվանցումը և վերադարձը

ե. ճիշտ ներկայացնել ակցիզային հարկի հաշվարկները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի և խնդրի լուծման միջոցով: Թեստում կնշվեն ակցիզային հարկ վճարողներ, չվճարողներ, ենթաակցիզային ապրանքներ, և ակցիզային հարկվող չհարկվող ապրանքներ, ակցիզային հարկով հարկման օբյեկտը, ակցիզային հարկին վերաբերող և չվերաբերող արտոնություններ. պետք է ընտրել ճիշտ տարբերակը: Իսկ խնդրի էությունն կկայանա հետևյալում. տրված խնդրի պայմաններին համապատասխան իրականացնել ակցիզային հարկին վերաբերող հաշվարկներ՝ օգտագործելով օրենքով սահմանված դրույքաչափերը:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ թվարկել ենթաակցիզային ապրանքները, սահմանել հարկ վճարողներին և հարկվող օբյեկտը ու բազան
- ❖ ուսումնասիրել դրույքաչափերը և արտոնությունները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե խնդիրը լուծեն անսխալ և թեստին պատասխանեն նմանապես անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ հարկային գերատեսչական տեղեկագրեր, հարկային ուղեցույցներ և գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

Արդյունք 7. Ծանոթանալ «Գույքահարկի մասին» օրենքին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ սահմանել գույքահարկ վճարողներին և հարկվող օբյեկտներն ու բազան

բ. ճիշտ կիրառել դրույքաչափերը և արտոնությունները

գ. ճիշտ ներկայացնել գույքահարկի հաշվարկները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի և խնդրի լուծման միջոցով: Թեստում կնշվեն գույքահարկ վճարողներ, չվճարողներ, օբյեկտներ, որոնք կհամարվեն հարկվող և չհարկվող գույքահարկին վերաբերող և չվերաբերող արտոնություններ. պետք է ընտրել ճիշտ տարբերակը: Իսկ խնդրի էությունն կկայանա հետևյալում. տրված խնդրի պայմաններին համապատասխան իրականացնել գույքահարկին վերաբերող հաշվարկներ՝ օգտագործելով օրենքով սահմանված դրույքաչափերը:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ սահմանել գույքահարկի վճարողներին և հարկվող օբյեկտներն ու բազան
- ❖ իրազեկ լինել սահմանված դրույքաչափերին և արտոնություններին:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե խնդիրը լուծեն անսխալ և թեստին պատասխան են նմանապես անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ հարկային գերատեսչական տեղեկագրեր, հարկային ուղեցույցներ և գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 8. Ծանոթանալ «Հողի հարկի մասին» օրենքին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ սահմանել հողի հարկ վճարողներին և հարկման օբյեկտները

բ. ճիշտ կիրառել դրույքաչափերը

գ. ճիշտ ներկայացնել հողի հարկի հաշվարկները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի և խնդրի լուծման միջոցով: Թեստում կնշվեն հողի հարկ վճարողներ, չվճարողներ, հարկման օբյեկտներ, որոնք կհամարվեն հարկվող և չհարկվող, հողի հարկին վերաբերող և չվերաբերող արտոնություններ. պետք է ընտրել ճիշտ տարբերակը: Իսկ խնդրի ելությունն կկայանա հետևյալում. տրված խնդրի պայմաններին համապատասխան իրականացնել հողի հարկին վերաբերող հաշվարկներ՝ օգտագործելով օրենքով սահմանված դրույքաչափերը:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ սահմանել հողի հարկի վճարողներին և հարկվող օբյեկտներն
- ❖ իրազեկ լինել սահմանված դրույքաչափերին և արտոնություններին:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե խնդիրը լուծեն անսխալ և թեստին պատասխան են նմանապես անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ հարկային գերատեսչական տեղեկագրեր, հարկային ուղեցույցներ և գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 2 ժամ

տեսական ուսուցում 1 ժամ

գործնական պարապունք 1 ժամ

Արդյունք 9. Ծանոթանալ սոցիալական և պարտադիր այլ վճարներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ սահմանել սոցիալական վճարներ կատարողներին և սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտները

բ. ճիշտ կիրառել դրույքաչափերը

գ.ճիշտ ներկայացնել սոցիալական, բնապահպանման և բնօգտագործման, ճանապարհային, հանրային ծառայությունների կարգավորման վճարների, պետական տուրքի հաշվարկները

դ.ճիշտ ներկայացնել անհատ ձեռնարակտիրության մասով սոցիալական վճարների հաշվարկման առանձնահատկությունները:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ու պատասխանի և խնդրի լուծման միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ պետք է պարզել ձեռք բերած գիտելիքների մակարդակը: Իսկ խնդրի էությունը կկայանա հետևյալում. առաջադրված պարամետրերով հաշվարկել սոցիալական վճարումը` կիրառելով ճիշտ դրույքաչափը:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները`

- ❖ սահմանել սոցիալական վճարներ կատրողներին, սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտները, և սոցիալական վճարներ առանձնահատկությունները:
- ❖ իրազեկ լինել գործող դրույքաչափերին

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե խնդիրը լուծեն անսխալ և հարց ու պատասխանն էլ լինի գրագետ և հասկանալի շարադրված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ հարկային գերատեսչական տեղեկագրեր, հարկային ուղեցույցներ և գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐ ՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը` ԲԳՄ 4-09-006

Մոդուլի տևողությունը` 72 ժամ

տեսական ուսուցում 38 ժամ

գործնական պարապումը 34 ժամ

Մոդուլի նպատակը` Այս մոդուլի նպատակն է բացատրել ՀՀ բանկային օրենսդրությունը, թվարկել ՀՀ-ում բանկերի գործունեությունը կարգավորող օրենքները և այլ իրավական ակտերը, ամփոփ ներկայացնել դրանցով կարգավորվող հարաբերությունները: Ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի իրավասությունը, խնդիրները, գործառույթները, դրամավարկային քաղաքականության ծրագրի բովանդակությունը և գործիքները, ՀՀ կենտրոնական բանկի կառավարումը, փոխհարաբերությունները ՀՀ պետական մարմինների, բանկերի և այլ անձանց հետ:

Մուտքային պահանջներ` ՀՀ քաղաքացիական իրավունք ` ԲԳՄ-4-09-007, բանկային գործի հիմունքներ` ԲԳՄ-4-09-011 մոդուլների իմացություն:

Ուսումնառության արդյունքները.

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա`

1. ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին»
2. ՀՀ օրենքը «Կենտրոնական բանկի մասին»
3. ՀՀ օրենքը «Բանկային գաղտնիքի մասին»
4. ՀՀ օրենքը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին»
5. ՀՀ օրենքը «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին»
6. ՀՀ օրենքը «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»
7. ՀՀ օրենքը «Սպառողական կրեդիտավորման մասին»
8. ՀՀ օրենքը «Ֆինանսական հաշտարարի մասին»
9. ՀՀ օրենքը «Ավանդների ներգրավման մասին »
10. Բանկերի նկատմամբ կիրառվող «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների դրույթները:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին»

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը`

- ա. ճիշտ է ներկայացնում ՀՀ բանկային համակարգը և բանկերի գործունեության իրավական կարգավորումը
- բ. ճիշտ է ներկայացնում Բանկերի կազմակերպական-իրավական տեսակները և կառավարումը
- գ. ճիշտ է ներկայացնում Բանկային գործունեության լիցենզավորման կարգը
- դ. ճիշտ է ներկայացնում Բանկային գործունեության կարգավորումը
- ե. ճիշտ է ներկայացնում Օրենսդրության խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցները
- զ. ճիշտ է ներկայացնում Բանկերի վերակազմակերպումը և լուծարումը:

Գնահատման միջոց`

Ուսանողին կառաջադրվի թեստ բանկային համակարգը կանոնակարգող իրավական ակտերի, բանկերի կազմակերպաիրավական տեսակների, բանկերի լիցենզավորման փուլերի, բանկերի լուծարելիության և վերակազմավորման վերաբերյալ:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները`

- ❖ բանկային համակարգը կարգավորող իրավական ակտերը և օրենքները
- ❖ բանկերի տեսակները
- ❖ բանկերի կազմակերպաիրավական տեսակները

- ✓ բաժնետիրական,
- ✓ փայատիրական,
- ✓ կոոպերատիվ
- ❖ բանկերի լիցենզավորման փուլերը
- ❖ բանկերի լուծարելիությունը և վերակազմավորումը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կարողանա պատասխանել առաջադրված թեստին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը, սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

Արդյունք 2. Իմանալ ՀՀ օրենքը «Կենտրոնական բանկի մասին»

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկի կարգավիճակը և խնդիրները
- բ. ճիշտ ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկի ծախսերը, եկամուտները և շահույթը
- գ. ճիշտ է ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի կառավարումը
- դ. ճիշտ է ներկայացնում Կենտրոնական բանկի փոխհարաբերությունները պետական մարմինների և իրենից լիցենզիա ստացած այլ անձանց հետ
- ե. ճիշտ է ներկայացնում Կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումները և պատասխանատվության միջոցներ կիրառելու կարգն ու պայմանները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով, որը կչափորոշի ուսանողի գիտելիքները կենտրոնական բանկի խնդիրների և ֆունկցիաների, ԿԲ-ի ծախսերի, եկամուտների շահույթի, ԿԲ-ի վերահսկողության իրականացումը բանկերի նկատմամբ հարցերի վերաբերյալ:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ ԿԲ-ի խդիրները և ֆունկցիաները
- ❖ ԿԲ-ի եկամուտները, ծախսերը և շահույթը
- ❖ ԿԲ-ի փոխհարաբերությունները կառավարման մարմինների և առևտրային բանկերի հետ
- ❖ ԿԲ-ի վերահսկողության ձևերը

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը կարողանա պատասխանել թեստին պատշաճ մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել ՀՀ օրենքը «Կենտրոնական բանկի մասին», սխեմաներ, գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 3. Իմանալ ՉՉ օրենքը «Բանկային գաղտնիքի մասին»

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում Բանկային գաղտնիք հասկացությունը

բ. ճիշտ է ներկայացնում Բանկային գաղտնիքի պահպանումը և հրապարակման արգելումը

գ. ճիշտ է ներկայացնում Բանկային գաղտնիքի տրամադրումը քրեական հետապնդում իրականացնող մարմիններին, դատարանին, հաճախորդի ժառանգներին (իրավահաջորդներին), հարկային մարմիններին

դ. ճիշտ է ներկայացնում Պատասխանատվությունը "Բանկային գաղտնիքի մասին" ՉՉ օրենքը խախտելու համար:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի և գործնական աշխատանքի միջոցով: Թեստում կառաջադրվի հարցեր, որոնք վերաբերեն բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին, դրանց պահպանմանը, տրամադրման և հրապարակման իրավական հիմքերին և կարգին:

Գործնական աշխատանքի ընթացքում պետք է լրացնի պայմանագրի ձևը, մեկնաբանելով պայմանագրում նշված իրավական կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները և դրանց տրամադրման կարգը
- ❖ օրենքը խախտելու ժամանակ պատասխանատվությունը, պայմանագրի լրացման կարգը

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը թեստի հարցերին լիարժեք պատասխանի, իսկ գործնական աշխատանքի ժամանակ աշատանքը կատարվի պատշաճ մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, «Բանկային գաղտնիքի մասին» ՉՉ օրենքը

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 4. Իմանալ ՉՉ օրենքը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին»

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում Բանկային ավանդը և երաշխավորված բանկային ավանդը,

բ. ճիշտ է ներկայացնում Երաշխավորված ավանդների հատուցման կարգը, պայմաններն ու ժամկետները

գ. Ճիշտ է ներկայացնում էրաշխիքային վճարները

դ. Ճիշտ է ներկայացնում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (կարգավիճակը, գործառույթները, կառավարման մարմինները):

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է բանավոր հարցուման թեստի միջոցով: Վերջինիս միջոցով ստուգվում է ուսանողի գիտելիքները ավանդների հատուցման կարգի, պայմանների, ժամկետների, վճարների վերաբերյալ: Բանավոր հարցման միջոցով կբացահայտվի ավանդների հատուցման հիմնադրամի գործառույթների իմացությունը:

Ստորև ներկայացնենք կատարման չափանիշների մանրամասները՝

- ❖ բանկային ավանդը
- ❖ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ
- ❖ հիմնադրամին կատարվող երաշխիքային վճարների չափը ֆիքսված և օրենքը

կանոնակարգող հիմնադրույթները:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե թեստի հարցերին տրվել է բավարար պատասխան: Բանավոր հարցման ընթացքում ուսանողը կարողացել է գրագետ շարադրել իր մտքերը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե խնդիրը լուծվի անսխալ և թեստին պատասխանվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքը, փաստաթղթեր, խանութում, պայմանագիր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 5. Իմանալ 33 օրենքը «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին»

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ:

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում Բանկի անվճարունակությունը և սնանկությունը

բ. ճիշտ է ներկայացնում ժամանակավոր ադմինիստրացիան:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով: Թեստի միջոցով ստուգվում է բանկերի սնանկության փուլերը, ժամանակավոր ադմինիստրացիայի ծրագրի և լուծարելիության մասին ուսանողի գիտելիքները:

Ստորև ներկայացվում է մանրամասներ.

- ❖ բանկի անվճարունակության պայմանները
- ❖ բանկի սնանկության փուլերը փուլերը
- ❖ ժամանակավոր ադմինիստրացիայի ծրագրերը

- ❖ լուծարելիություն, լուծարելիության կառավարչի գործունեությունը
- ❖ վճարումների կատարման հերթականությունը

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կարողանում է թեստով առաջադրված հարցերին տալ բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն և համապատասխան օրենքը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապումը 4 ժամ

Արդյունք 6. Ծանոթանալ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը

բ. ճիշտ է ներկայացնում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազոր մարմինը

գ. ճիշտ է ներկայացնում լիազոր մարմնի և այլ մարմինների փոխհարաբերությունները

դ. ճիշտ է ներկայացնում հաճախորդի ուսումնասիրությունը

ե. ճիշտ է ներկայացնում հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերը և դիտարկումների ստորաբաժանումը

զ. ճիշտ է ներկայացնում կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի կասեցումը, դրանց իրականացման մերժումը և ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցումը:

Գնահատման միջոց՝

Արդյունքը գնահատելիս կիրառելի է հարց ու պատասխանի մեթոդը, որը կչափորոշի ուսանողի կողմից օրենքի իմացությունը:

Ստորև ներկայացվում է առանցքային հարցերը.

- ❖ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը և պայքարի միջոցները
- ❖ հաճախորդի ուսումնասիրությունը
- ❖ կասկածելի գործարար հարաբերություն կամ գործարքի կասեցումը
- ❖ ֆինանսական միջոցների սառեցման հիմքերը և կարգը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի առաջադրված հարցերին տրված է բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն և համապատասխան օրենք:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 7. Իմանալ 33 օրենքը «Սպառողական կրեդիտավորման մասին»

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ .

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում կրեդիտավորման պայմանագրերը

բ. ճիշտ է ներկայացնում սպառողի իրավունքները

գ. ճիշտ է ներկայացնում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկումը

դ. ճիշտ է ներկայացնում կրեդիտավորողի պատասխանատվությունը:

Գնահատման միջոց՝

Արդյունքը գնահատելիս կիրառելի է հարց ու պատասխանի մեթոդը, որը կչափորոշի ուսանողի կողմից օրենքի իմացությունը:

Ստորև ներկայացվում է առանցքային հարցերը.

- ❖ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը և պայքարի միջոցները
- ❖ հաճախորդի ուսումնասիրությունը
- ❖ կասկածելի գործարար հարաբերություն կամ գործարքի կասեցումը
- ❖ ֆինանսական միջոցների սառեցման հիմքերը և կարգը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի առաջադրված հարցերին տրված է բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն և համապատասխան օրենք:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 8. Իմանալ 33 օրենքը «Ֆինանսական հաշտարարի մասին»

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ .

ուսանողը՝

ա.ճիշտ է ներկայացնում ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը ենթակա պահանջները և դրանց քննության կարգը

բ. ճիշտ է ներկայացնում ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունները

գ. ճիշտ է ներկայացնում ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի իրավական կարգավիճակը

դ. ճիշտ է ներկայացնում գրասենյակի ֆինանսավորումը:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով: Նա պետք է ծանոթ լինի «ֆինանսական հաշտարարի մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթներին, ֆինանսական հաշտարարի քննությանը ենթակա պահանջներին և դրանց քննության կարգին: Գործնական աշխատանքի ընթացքում հանձնարարել ռեֆերայի օրենքի առանձին դրույթներ:

Ստորև ներկայացրում է առանցքային հարցերը.

- ❖ Օրենքի հիմնական դրույթները
- ❖ ֆինանսական հաշտարարի քննության պահանջները և անցկացման կարգը

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը ցուցաբերի բավարար իմացություն «ֆինանսական հաշտարարի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, «ֆինանսական հաշտարարի մասին» ՀՀ օրենքը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 9. Իմանալ ՀՀ օրենքը «Ավանդների ներգրավման մասին»

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում հրապարակման ենթակա տեղեկատվությունը

բ. ճիշտ է ներկայացնում տեղեկատվական ամփոփագրերը

գ. ճիշտ է ներկայացնում հաշվի քաղվածքները

դ. ճիշտ է ներկայացնում բանկի և ավանդատուի հաղորդակցումը

ե. ճիշտ է ներկայացնում ավանդատուների իրավունքների պաշտպանությունը

զ. ճիշտ է ներկայացնում բանկի պատասխանատվությունը:

Գնահատման միջոց՝

Ուսանողի գիտելիքները պետք է ստուգել գործնական աշխատանքի և բանավոր հարցման միջոցով, որի ընթացքում կբացահայտվի նրա «Ավանդների ներգրավման մասին» օրենքի իմացությունը: Ուսանողը պետք է ներկայացնի օրենքի հիմնական դրույթները: Գործնական աշխատանքի ընթացքում առաջադրված խնդիրների համար ուսանողը պետք է պատրաստի հաշվի քաղվածք, մեկնաբանի ավանդատուի իրավունքները և բանկի պատասխանատվությունը ավանդատուի նկատմամբ:

Ստորև ներկայացվում է մանրամասներ.

- ❖ ավանդատուի շահերի պաշտպանությունը
- ❖ հաշվի քաղվածքի պատրաստում
- ❖ բանկի պատասխանատվությունը ավանդատուի հանդեպ:

Արդյունքի ձեռք բերումը կհամարվի դրական, եթե բանավոր հարցման ընթացքում ուսանողը կարողանա մասնագիտական լեզվով շարադրել իր մտքերը օրենքի դրույթների վերաբերյալ: Գործնական աշխատանքը կատարի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, «Ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 10. Իմանալ բանկերի նկատմամբ կիրառվող «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների դրույթները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում բանկերի նկատմամբ կիրառվող «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները

բ. ճիշտ է ներկայացնում բանկերի նկատմամբ կիրառվող «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Գնահատման միջոց՝

Արդյունքը գնահատելու համար կիրառել թեստի տարբերակը, որը հնարավորություն կտա չափորոշել ուսանողի «բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների դրույթների իմացությունը:

Ստորև ներկայացվում է մանրամասներ.

- ❖ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները
- ❖ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները
- ❖ օրենքով բաժնետերերի և փայատերերի իրավունքները և պարտականությունները
- ❖ կանոնակարգող դրույթները:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրված թեստի հարցերին կարողանա տալ բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն և համապատասխան օրենքները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄՔ»

Մոդուլի դասիչը՝ ԲԳՄ-4-09-007

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ:

տեսական ուսուցում 36 ժամ

գործնական պարապմունք 18 ժամ

Մոդուլի նպատակը՝ Այս մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերություններին, նորմերին: Ծանոթացնել ուսանողին քաղաքացիական իրավունքի օբյեկտներին և սուբյեկտներին, դրանց տեսակներին, ինչպես նաև սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանության եղանակներին: Ծանոթացնել գործարք, պարտավորություն, պայմանագիր հասկացություններին և նրանից ծագող պարտավորությունների հետ:

Մուտքային պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները.

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա՝

1. Քաղաքացիական իրավունքի առարկան, մեթոդը, սկզբունքները, քաղաքացիական իրավունքների ծագումը և դրանց պաշտպանությունը
2. Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները
3. Քաղաքացիական իրավունքների օբյեկտները
4. Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ
5. Գործարքներ, ներկայացուցչություն, ժամկետներ, հայցային վաղեմություն
6. «Պարտավորություն» հասկացությունը և նրա տեսակները
7. Պայմանագրերից ծագող պարտավորություններ
8. Պայմանագրերի առանձին տեսակներ

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք1. Իմանալ քաղաքացիական իրավունքի առարկան, մեթոդը, սկզբունքները, քաղաքացիական իրավունքների ծագումը և դրանց պաշտպանությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ .

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում «ՀՀ քաղաքացիական իրավունք » առարկան և մեթոդը

բ. ճիշտ է ներկայացնում ՀՀ քաղաքացիական իրավունքի կառուցվածքը

գ. ճիշտ է ներկայացնում քաղաքացիական օրենսդրության և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերը

դ. ճիշտ է ներկայացնում քաղաքացիական օրենսդրության սկզբունքները

ե. ճիշտ է ներկայացնում քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը:

Իրավունքներն իրականացնելու սահմանները

զ. ճիշտ է ներկայացնում քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի և թեմատիկ աշխատանքի միջոցով, որը իր մեջ ներառում է սովորած չափանիշներից հարցեր թեստի ձևով և գործնական աշխատանք: Թեստի հարցերը պետք է վերաբերի քաղաքացիական օրենսգրքի կառուցվածքին և բովանդակությանը, քաղաքացիական իրավունքների նորմերի մեկնաբանման վերաբերյալ սահմանված կանոններին: Որպես գործնական աշխատանք հանձնարարել գրել ռեֆերատ՝ «ՀՀ քաղաքացիական օրենսդրության բովանդակությունը», «Քաղաքացիական իրավունքի պաշտպանության եղանակները» թեմաներով:

Ստորև ներկայացրում է առանցքային հարցերը.

- ❖ Օրենքի հիմնական դրույթները
- ❖ Ֆինանսական հաշտարարի քննության պահանջները և անցկացման կարգը

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը ցուցաբերի բավարար իմացություն «ֆինանսական հաշտարարի մասին»

ՀՀ օրենքի վերաբերյալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Տեսական ուսուցման ընթացքում օգտագործել մասնագիտական գրականություն, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 2. Իմանալ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.՝

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում քաղաքացիների մասնակցությունը քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերություններում

բ. ճիշտ է ներկայացնում իրավաբանական անձանց մասնակցությունը քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերություններում:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է բանավոր հարցման միջոցով: Հարցման նպատակն է՝ ստուգել ուսանողի գիտելիքները քաղաքացիական իրավունքի սյուբեկտների վերաբերյալ:

Ստորև ներկայացրում է առանցքային հարցերը.

- ❖ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունները
- ❖ քաղաքացիական իրավունքների մասնակիցները.

✓ ֆիզիկական անձինք,

- ✓ իրավաբանական անձինք,
- ✓ Հայաստանի Հանրապետություն,
- ✓ համայնքներ

❖ նրանց գործունակությունն, իրավունակությունը և առանձնահատկությունները:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը կարողանա բավարար չափով պատասխանել առաջադրված հարցերին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Տեսական ուսուցման ընթացքում օգտագործել մասնագիտական գրականություն, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք ---- ժամ

Արդյունք 3. Իմանալ քաղաքացիական իրավունքների օբյեկտները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում քաղաքացիական իրավունքների օբյեկտները և դրանց շրջանառունակությունը,
- բ. ճիշտ է ներկայացնում արժեթղթերի հասկացությունը և տեսակները
- գ. ճիշտ է ներկայացնում ոչ նյութական բարիքները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային եղանակով, որի միջոցով պետք է պարզել ուսանողի գիտելիքները կազմակերպությունների իրավական վիճակի համեմատական բնութագիրը, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգը, արժեթղթերի տեսակներն ու ոչ նյութական բարիքները հարցերի վերաբերյալ:

Ստորև ներկայացվում է առանցքային հարցերը.

- ❖ կազմակերպությունների իրավական վիճակի համեմատական բնութագիրը
- ❖ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման ընթացակարգը
- ❖ արժեթղթերի տեսակները և ոչ նյութական բարիքներ:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե թեստով առաջադրված հարցերին կտրվի բավարար պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

մասնագիտական գրականություն, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 4. Իմանալ սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքների մասին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ուսանողը՝

ա. Ճիշտ է ներկայացնում սեփականության և այլ գույքային իրավունքներին վերաբերող ընդհանուր դրույթներ

բ. Ճիշտ է ներկայացնում սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերը և եղանակները

գ. Ճիշտ է ներկայացնում ընդհանուր սեփականության հասկացությունը և ձևերը

դ. Ճիշտ է ներկայացնում հողի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները

ե. Ճիշտ է ներկայացնում բնակելի տարածության սեփականության և օգտագործման իրավունքները

զ. Ճիշտ է ներկայացնում սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանության եղանակները

է. Ճիշտ է ներկայացնում սեփականության և այլ գույքային իրավունքները դադարումը:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով, նրա օգնությամբ պարզել ուսանողի գիտելիքները ընդհանուր սեփականության հասկացության և տեսակների, սեփականության իրավունք ձեռք բերելու և իրականացնելու հիմքերը, սեփականության իրավունքների պաշտպանության եղանակների և դադարման հիմքերի հարցերի վերաբերյալ:

Ստորև ներկայացվում է մանրամասներ

- ❖ ընդհանուր սեփականության հասկացությունը և տեսակները
- ❖ սեփականության իրավունքի վերաբերյալ ընդհանուր դրույթները
- ❖ սեփականության իրավունք ձեռք բերելու և իրականացնելու հիմքերը
- ❖ սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանության եղանակներն ու դադարման հիմքերը:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե թեստի հարցերի մեծ մասին ուսանողը կտա դրական պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել օգտագործել մասնագիտական գրականություն, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

Արդյունք 5. Իմանալ գործարքներ, ներկայացուցչություն, ժամկետներ, հայցային վաղեմություն հասկացությունները :

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ուսանողը`

ա. Ճիշտ է ներկայացնել գործարքի հասկացությունը, գործարքների տեսակները և ձևերը

բ. Ճիշտ է ներկայացնել անվավեր գործարքների իրավական կարգավորումը

գ. Ճիշտ է ներկայացնել ներկայացուցչության հասկացությունը

դ. Ճիշտ է ներկայացնել ժամկետները որոշելու կարգը

ե. Ճիշտ է ներկայացնել հայցային վաղեմության ընդհանուր և հատուկ ժամկետների հասկացությունը, վաղեմության ժամկետների հաշվարկը, վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատվելը և կասեցնելը:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը պետք է չափորոշի ուսանողի հիմնական հասկացությունների իմացությունը, որոնցից է գործարք,

ներկայացուցչության, հայցային վաղեմության ընդհանուր և հատուկ ժամկետը:

Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարել կազմել լիազորագիր և բացատրել լիազորագրի նպատակը և ժամկետը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները

- ❖ գործարքի հասկացությունը
- ❖ գործարքի տեսակները և ձևերը.
 - ✓ հատուկ կամ նոտարական,
 - ✓ երկկողմ կամ բազմակողմ,
 - ✓ միակողմ
- ❖ ներկայացուցչության վերաբերյալ սահմանված կանոնները
- ❖ ժամկետների հաշվարկման կանոնները
- ❖ հայցային վաղեմության ժամկետները, դրանց կասեցնելը և ժամկետի ընթացքի ընդհատվելը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի հարցերին տրված է լիարժեք

պատասխան: Գործնական աշխատանքը կատարվում է անթերի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 6. Ծանոթանալ «պարտավորություն» հասկացությանը և նրա տեսակներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում պարտավորության հասկացությունը և կողմերը
- բ. ճիշտ է ներկայացնում համիրավ պահանջների, համապարտ պարտականությունների և սուբսիդիար պատասխանատվության հասկացությունները
- գ. ճիշտ է ներկայացնում պարտավորությունների կատարման իրավական կարգավորումը
- դ. ճիշտ է ներկայացնում պարտավորությունների կատարման ապահովման եղանակները (տուժանք, գույքի պահում, երաշխավորություն, երաշխիք, նախավճար) և դրանց իրավական կարգավորումը
- ե. ճիշտ է ներկայացնում գրավի հասկացությունը, տեսակները և դրանց հետ կապված հարաբերությունների կարգավորումը
- զ. ճիշտ է ներկայացնում պարտավորության մեջ անձանց փոփոխվելու հիմքերը և եղանակները
- է. ճիշտ է ներկայացնում պարտավորությունները խախտելու համար պատասխանատվության ձևերը
- ը. ճիշտ է ներկայացնում պարտավորությունների դադարումը:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի և թեստի միջոցով: Թեստը պետք է ընդգրկի պարտավորության կողմերը, պարտավորության կատարման ապահովման եղանակները, պարտավորությունները դադարելու հիմքերը և հետևանքները: Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարել խնդիր գրավի տեսակների վերաբերյալ:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները

- ❖ պարտավորության հասկացությունը և կողմերը
- ❖ պարտավորությունների կատարման իրավական կարգավորումը
- ❖ պարտավորությունների կատարման ապահովման եղանակները տուգանք, գույքի պահում, երաշխավորություն, երաշխիք
- ❖ գրավի հասկացությունը, տեսակները՝ իրավունքի գրավ, կոշտ գրավ, շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե թեստի հարցերին տրված է լիարժեք պատասխաններ: Գործնական աշխատանքը կատարել ամբողջությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 7. Իմանալ պայմանագրերից ծագող պարտավորությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ուսանողը՝

- ա. ճիշտ է ներկայացնում պայմանագրի և դրա էական պայմանների հասկացությունները
- բ. ճիշտ է ներկայացնում պայմանագիր կնքելու ձևերը և եղանակները
- գ. ճիշտ է ներկայացնում պայմանագիրը փոփոխելու և լուծելը հիմքերն ու եղանակները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը ընդգրկում է պայմանագիր հասկացությունը, պայմանագիրը կնքելու ձևերը և եղանակները, պայմանագիրը փոխելու հիմքերը և եղանակները:

Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարել խնդիր. կազմել տարբեր պայմանագրեր և մեկնաբանել կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները

- ❖ պայմանագրի հասկացությունը և էական պայմանները ամրագրող դրույթները
- ❖ պայմանագիրը փոխելու հիմքերն ու եղանակները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստով առաջադրված հարցերին տրված է բավարար պատասխան: Գործնական աշխատանքը ուսանողը կատարել է ամբողջությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն,
ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապուներ 4 ժամ

Արդյունք 8. Իմանալ պայմանագրերի առանձին տեսակներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա. ճիշտ է ներկայացնում ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրի իրավական կարգավորումը

բ. ճիշտ է ներկայացնում դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրի իրավական կարգավորումը

գ. ճիշտ է ներկայացնում փոխառության պայմանագրի իրավական կարգավորումը

դ. ճիշտ է ներկայացնում վարկային պայմանագրի իրավական կարգավորումը

ե. ճիշտ է ներկայացնում բանկային ավանդի պայմանագրի իրավական կարգավորումը

զ. ճիշտ է ներկայացնում բանկային հաշվի պայմանագրի իրավական կարգավորումը, գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի իրավական կարգավորումը, հանձնարարության պայմանագրի իրավական կարգավորումը, կոմիսիայի պայմանագրի իրավական կարգավորումը, գործակալության պայմանագրի իրավական կարգավորումը:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, որի ընթացքում ուսանողին հանձնարարվում է կազմել պայմանագրի մի շարք ձևեր, որոնք վերաբերում են լիզինգային, ֆակտորինգային, վարկային, ավանդային, բանկային հաշվի վերաբերյալ գործառնություններին: Ուսանողը պետք է մեկնաբանի յուրաքանչյուր պայմանագրի իրավական կարգավորումը:

Ստորև ներկայագնենք արդյունքի կատարման մանրամասները

- ❖ ֆինանսական վարձակալության լիզինգի պայմանագրի իրավական կարգավորումը
- ❖ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրի իրավական կարգավորումը
- ❖ կարգավորումը
- ❖ վարկային և ավանդային պայմանագրերի իրավական կարգավորումը
- ❖ բանկային հաշվի պայմանագրի իրավական կարգավորումը

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը կարողանա կազմել պայմանագիրը և տա դրանց խախտման կարգավորման մեկնաբանությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն,
ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, պայմանագրի ձևեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապուներ 2 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ԲԳՄ-4-09-008

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

տեսական ուսուցում 26 ժամ

գործնական պարապումը 46 ժամ

Մոդուլի նպատակը՝

Ուսանողին ծանոթացնել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքին: Տրամադրել հաշվապահական հաշվառման անհրաժեշտ գիտելիքներ, որպեսզի ուսանողը տիրապետի հաշվապահական հաշվառման վարման, ինչպես նաև հաշվետվությունների լրացման և վերլուծության հմտություններին:

Մուտքային պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները.

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա՝

1. Հաշվապահական հաշվառման ընկալումը որպես տեղեկատվական և որոշումների կայացմանը աջակցող համակարգ:
2. ՀՀ օրենքը՝ «Հաշվապահական հաշվառման մասին»:
3. Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների հաշվետվության ներկայացումը:
4. Հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման մեկնաբանումը:
5. Հաշվապահական հաշիվների հաշվային պլանը:
6. Հաշվապահական փաստաթղթերի և գրանցամատյանների ներկայացումը:
7. Անալիտիկ և սինթետիկ հաշվառման կարգը և հաշվետվությունների կազմումը:
8. Ակտիվների և պարտավորությունների գույքագրման անհրաժեշտության հիմնավորումը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Բնորոշել հաշվապահական հաշվառման ընկալումը որպես տեղեկատվական և որոշումների կայացմանը աջակցող համակարգի:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ .

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ բնութագրել հաշվապահական համառման խնդիրներն ու նպատակը

բ. ճիշտ բնորոշել հաշվապահական հաշվառման տեղեկատվության հավաքման, գրանցման եւ ընդհանրացման համակարգը

գ. ճիշտ բնորոշել հաշվապահական հաշվառման տեղեկատվության ներքին և արտաքին օգտագործողներին :

Գնահատման միջոց՝

Արդյունքը գնահատելիս կիրառելի է գործնական աշխատանքի և թեստի տարբերակը, որը պետք է ընդգրկի հաշվապահական հաշվառման ներքին և արտաքին օգտագործողները, տեղեկատվական ռիսկը և նրանից խուսափելու միջոցառումները:

Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարել խնդիր հաշվապահական հաշվառման տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման վերաբերյալ:

Ստորև ներկայացվում է արդյունքի առանցքային հարցերը.

- ❖ հաշվապահական հաշվառման խնդիրները և նպատակը
- ❖ տեղեկատվության ներքին և արտաքին օգտագործողները
- ❖ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման ընթացակարգը
- ❖ տեղեկատվական ռիսկը և դրանից խուսափելու միջոցառումները

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե թեստի բոլոր հարցերին տրվի դրական պատասխան

Գործնական աշխատանքը կկատարի ամբողջությամբ

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին», ինչպես նաև հաշվապահման փաստաթղթի ձևեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 2. Ներկայացնել ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին»:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

Ուսանողը՝

- ա. ճիշտ է սահմանում օրենքների գործողության ոլորտը
- բ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման կարգավորումը, ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը
- գ. ճիշտ է բնութագրում ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները և ներկայացումը
- դ. ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը
- ե. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական խախտումների համար պատասխանատվությունը:

Գնահատման միջոց՝

Արդյունքը գնահատելիս կիրառել գործնական աշխատանքի և թեստի տարբերակը, որը պարզելու ուսանողի գիտելիքները օրենքի գործողության ոլորտի, հաշվապահական հաշվառման կարգավորման, ֆինանսական հաշվապահական տարրերի ճանաչման և չափման վերաբերյալ:

Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարել խնդիր, որի լուծումը կբացահայտի նրա ունակությունները ֆինանսական հաշվեկշռի կազմման սկզբունքների և ներկայացման վերաբերյալ:

Ստորև ներկայացվում է արդյունքի հիմնական հարցերը.

- ❖ հաշվապահական հաշվառման օրենքի գործողության ոլորտը

- ❖ ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը
- ❖ հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը
- ❖ ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները և ներկայացումը

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը կարողանա տալ թեստին լիարժեք պատասխան:

Գործնական աշխատանքը կատարի անբողջությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, հաշվետվությունների ձևեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 3. Ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների հաշվետվության ներկայացման հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Ուսանողը՝

- ա. ճիշտ է բնութագրում կազմակերպության ակտիվները, պարտավորություններն ու կապիտալը
- բ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշռի բաժինները
- գ. ճիշտ է մեկնաբանում տնտեսական գործառնությունների հետևանքով հաշվապահական հաշվեկշռում տեղի ունեցող փոփոխությունները
- դ. ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվեկշռի հիմնական ֆունկցիաները:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի և գործնական աշխատանքի միջոցով, որը պետք է ընդգրկի առաջադրանքներ, որոնք պահանջում են սովորած նյութի ըմբռնում:

Թեստը պետք է ընդգրկի հետևյալ հարցերը.

- ✓ կազմակերպության ակտիվներ, պարտավորություններ, կապիտալ
- ✓ հաշվապահական հաշվեկշռի բաժիններ
- ✓ հաշվեկշռում տողի ունեցող փոփոխություններ

Գործնական աշխատանքի ընթացքում առաջադրել խնդիր, որի հիման վրա ուսանողը պետք է կազմի հաշվեկշիռ:

Ստորև ներկայացվում է արդյունքի հիմնական հարցերը

- ❖ կազմակերպության ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- ❖ հաշվետվության հաշվեկշռի բաժինները
- ❖ հաշվեկշռում տեղի ունեցող փոփոխությունները
- ❖ հաշվապահական հաշվառման հիմնական ֆունկցիաները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի բոլոր հարցերին տրված է սպառիչ պատասխան:

Գործնական աշխատանքը ճիշտ է կատարված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն,
«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, հաշվետվությունների ձևեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 14 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապունք 8 ժամ

Արդյունք 4. Մեկնաբանել հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման գործառնությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ուսանողը կարողանում է`

ա. ճիշտ մեկնաբանել կրկնակի գրանցման կարևորագույն գործառնությունները հաշվապահական հաշվառման համակարգում

բ. ճիշտ տարբերակել ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվները

գ. ճիշտ ձևակերպել տնտեսական գործառնությունների հաշվային թղթակցություններ

դ. ճիշտ կատարել կրկնակի գրանցում հաշվապահական հաշիվներում

ե. ճիշտ որոշել հաշվապահական հաշիվների մնացորդները և հաշիվներով կազմել շրջանառության տեղեկագիր:

Գնահատման միջոց`

Արդյունքը գնահատելիս կիրառելի է գործնական աշխատանքի և թեստի տարբերակը, որը պետք է ընդգրկի կրկնակի գրանցման գործառնությունները, ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվները:

Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին առաջադրել խնդիրներ, որը վերաբերվի տնտեսական գործառնությունների հաշվային թղթակցություններին, կրկնակի գրանցմանը, հաշվապահական հաշիվների մնացորդների հաշվարկմանը և կազմել տեղեկագիր:

Ստորև բերվում է արդյունքների հիմնական հարցերը

- ❖ կրկնակի գրանցման կարևոր գործառնություններ
- ❖ ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվներ
- ❖ թղթակցային հաշիվները և ձևակերպումը
- ❖ հաշվապահական հաշիվների մնացորդները և հաշիվներով կազմել շրջանառության տեղեկագիր:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի բոլոր հարցերին տրված է բավարար պատասխան:

Գործնական աշխատանքը կատարել է բավարար չափով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն,
«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, փաստաթղթեր, ձևեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 8 ժամ

Արդյունք 5. Իմանալ հաշվապահական հաշիվների հաշվային պլանը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ուսանողը`

ա. ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման հաշվային պլանը

բ. ճիշտ է տարբերակում հաշվապահական հաշիվները ըստ տնտեսական բովանդակության, դասերի, խմբերի, առաջին և երկրորդ կարգերի

գ. գիտի օգտվել հաշվային պլանից, ձևակերպել տնտեսական գործառնությունների հաշվապահական թղթակցությունները

դ. գիտի արտահաշվեկշռային հաշիվների դերը հաշվապահական հաշվառման համակարգում:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, որի դեպքում առաջադրվում են առաջադրանքներ, որոնք պահանջում են ամբողջական նյութի յուրացում:

Գործնական պարապմունքի ընթացքում ուսանողը պետք է տիրապետի հաշվային պլանից օգտվելու կարգին: Կարողանա ձևակերպել տնտեսական գործառնությունների հաշվապահական թղթակցությունները:

Ստորև ներկայացվում է կատարման չափանիշի մանրամասները.

- ❖ հաշվային պլանի բնութագիրը
- ❖ հաշվապահական հաշիվը ըստ տնտեսական բովանդակության, դասերի, խմբերի, առաջին և երկրորդ կարգերի
- ❖ արտահաշվեկշռային հաշիվների դերը հաշվապահական
- ❖ հաշվառման համակարգում:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը գործնական աշխատանքը կարողանա կատարել:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, , փաստաթղթեր, հաշվային պլան:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապումը 6 ժամ

Արդյուն 6. Իմանալ հաշվապահական փաստաթղթերի և գրանցամատյանների ներկայացումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ .

ուսանողը`

ա. ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի դասակարգումը

բ. ճիշտ է ներկայացնում սկզբնական փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները, փաստաթղթերի ժամանակին և ամբողջական ձևակերպումը, հայտնաբերված սխալների ուղղման կարգը,

գ. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման գրանցամատյանները

դ. ճիշտ է փոխակապակցում փաստաթղթային շրջանառությունը հաշվապահական գրանցամատյանների հետ

ե. ճիշտ է իրականացնում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ստուգումը և կատարված սխալ գրանցումների ուղղում

զ. գիտի կատարել փաստաթղթերի և գրանցամատյանների արխիվացման ձևերը:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատումը իրականացվելու գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը պետք է չափորոշի ուսանողի գիտելիքները հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթի վավերապայմանները, ձևակերպումը, սխալների ուղղումը, փաստաթղթերի դասակարգումը: Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողը պետք է կարողանա տվյալները գրանցել գրանցամատյանում, իրականացնի փաստաթղթերի ստուգում և սխալների ուղղում: Տիրապետի փաստաթղթերի արխիվացման ձևերին:

Ատորև ներկայացվում է կատարման չափանիշի մանրամասները.

- ❖ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի դասակարգումը
- ❖ սկզբնական փաստաթղթի պարտադիր վավերապայմանները և ձևակերպումը
- ❖ հաշվապահական հաշվառման գրանցամատյանները
- ❖ փաստաթղթերի ստուգում և սխալների ուղղում
- ❖ փաստաթղթերի և գրանցամատյանների արխիվացման ձևերը:

Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողի թեստի արդյունքները բավարար են:

Գործնական աշխատանքը կատարել է բավարար մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, փաստաթղթեր, ձևեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումը 4 ժամ

Արդյունք 7. Ծանոթանալ անալիտիկ և սինթետիկ հաշվառման կարգին և հաշվետվությունների կազմման հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը`

- ա. ճիշտ է ներկայացնում սինթետիկ և անալիտիկ հաշվառման կարգը
- բ. ճիշտ է ըմբռնում սինթետիկ և անալիտիկ հաշվառման տեղեկատվական փոխանցման ուղիները
- գ. ճիշտ է ամփոփում անալիտիկ հաշիվների մնացորդները և հանրագումարային արժեքով կարողանում է համադրել համապատասխան սինթետիկ հաշվի մնացորդի հետ
- դ. կարողանում է սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագրի հիմնան վրա կազմել հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների հաշվետվություն:

Գնահատման միջոց`

Արդյունքը գնահատելիս կարելի է կիրառել համակցված թեստ, որը ներառում է տեքստային և գծապատկերային տեղեկատվություն, որոնք փոխադարձաբար լրացնելով միմյանց թույլ է տալիս մշակել

խնդրի լուծման ճիշտ ընթացք մարտավարություն: Թեստը պետք է ներառի սինթետիկ և անալիտիկ հաշվառման կարգը, այդ հաշվառման փոխանցման ուղիները, մնացորդների համադրումը, հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվության կազմում:

Ստորև ներկայացվում են արդյունքի մանրամասները

- ❖ սինթետիկ և անալիտիկ հաշվառման կարգը
- ❖ սինթետիկ և անալիտիկ հաշվառման տեղեկատվության փոխանցման ուղիները
- ❖ հաշիվների մնացորդների հանրագումարների համադրում
- ❖ հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվության կազմում:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը բավարար չափով կարողանում է պատասխանել համակցված թեստի հարցերին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացվելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, փաստաթղթեր և հաշվային պլան:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 8. Տալ ակտիվների և պարտավորությունների գույքագրման անհրաժեշտության հիմնավորումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ուսանողը կարողանում է`

ա. ճիշտ ընկալել ակտիվների և պարտավորությունների գույքագրման դրդապատճառները

բ. ճիշտ ընկալել գույքագրման գործառույթները հաշվապահական հաշվառման տեղեկատվության արժանահավտության գնահատման ոլորտում

գ. ճիշտ դասակարգել գույքագրման տեսակները և ըմբռնել գույքագրման հանձնաժողովների ձևավորման սկզբունքները

դ. ճիշտ ամփոփել գույքագրման արդյունքները և կազմել գույքագրման «համեմատման տեղեկագրեր»

ե. ճիշտ ձևակերպել գույքագրման արդյունքները` հաշվապահական համապատասխան թղթակցություններով:

Գնահատման միջոց`

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը պետք է չափորոշի ուսանողի գիտելիքները հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթի վավերապայմանները, ձևակերպումը, սխալների ուղղումը, փաստաթղթերի դասակարգումը:

Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողը պետք է կարողանա տվյալները գրանցել գրանցամատյանում, իրականացնի փաստաթղթերի ստուգում և սխալների ուղղում: Տիրապետի փաստաթղթերի արխիվացման ձևերին:

Ստորև ներկայացվում է կատարման չափանիշի մանրամասները.

- ❖ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի դասակարգումը
- ❖ սկզբնական փաստաթղթի պարտադիր վավերապայմանները և ձևակերպումը

- ❖ հաշվապահական հաշվառման գրանցամատյանները
- ❖ փաստաթղթերի ստուգում և սխալների ուղղում
- ❖ փաստաթղթերի և գրանցամատյանների արխիվացման ձևերը:

Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողի թեստի արդյունքները բավարար համարվեն:

Գործնական աշխատանքը կատարել է բավարար մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար պետք է օգտագործել մասնագիտական գրականություն, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, փաստաթղթեր և հաշվային պլան:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումը 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ԲԱՆԿԱՅԻՆ ՄԱՐՔԵԹԻՆԳ»

Մոդուլի դասիչը` ԲՄԱՐՔ-4-09-009

Մոդուլի տևողությունը` 36 ժամ

տեսական ուսուցում 18 ժամ

գործնական պարապումը 18 ժամ

Մոդուլի նպատակը` ուսանողին պետք է տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ „Բանկային մարքեթինգ“ առարկայի հասկացության, սպառողների ուսումնասիրության, տեղեկատվության, շուկայի սեգմենտավորման (հատվածավորման) բանկի ապրանքային, գնային, ինչպես նաև կոմունիկացիոն քաղաքականության մասին:

Մուտքային պահանջներ` տնտեսագիտության տեսության հիմունքներ` ԲԳՄ 4-09-001

Ուսումնասիրության արդյունքները`

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա`

1. բանկային մարքեթինգի էությունը և առանձնահատկությունները
2. սպառողների ուսումնասիրությունը
3. տեղեկատվությունը և մարքեթինգային հետազոտությունները բանկերում
4. շուկայի սեգմենտավորում (հատվածավորում)
5. բանկի ապրանքային քաղաքականությունը
6. բանկի գնային քաղաքականությունը
7. բանկի կոմունիկացիոն քաղաքականությունը

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ծանոթացնել բանկային մարքեթինգի էությանը և առանձնահատկությանը

ԿԱՏԱՐՆԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է բնութագրում մարքեթինգի հիմնական հասկացությունը, մարքեթինգի կիրառումը բանկում, բանկային առաջացման նախադրյալները և հիմնական կատեգորիաները

բ/ ճիշտ է ներկայացնում բանկային մարքեթինգի միկրո և մակրո միջավայրերը (մատակարարներ, միջնորդներ, մրցակիցներ, հաճախորդներ, կոնտակտային, լսարան):

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխան և գործնական աշխատանքի միջոցով: Գործնական աշխատանքի ժամանակ ուսանողին հանձնարարվում է նկարագրել(գրավոր) մի իրավիճակ,որի ժամանակ բանկային գործունեության վրա ազդում են մակրո ու միկրո միջավայրի գործոններ, ինչ միջոցառումներ պետք է բանկը ձեռքառնի այդ գործոնների նկատմամբ: Հարց ու պատասխանի ժամանակ պետք է պարզել, թե ինչքանով է ուսանողը յուրացրել բանկային մարքեթինգի հասկացությունները, բանկային մարքեթինգի առաջացման նախադրյալները:

Ստորև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները

- ❖ բնութագրել մարքեթինգի հիմնական հասկացությունները(կարիք, պահանջումը, պահանջարկ, ապրանք փոխանակում, գործարք և շուկա),մարքեթինգի կիրառումը բանկում, բանկային մարքեթինգի առաջացման նախադրյալները և առանձնահատկությունները
- ❖ ծանոթանալ բանկային մարքեթինգի միկրո և մակրո միջավայրերին, ինչպես նաև այս միջավայրերի վերահսկվող և չվերահսկվող գործոններին

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե գործնական աշխատանքը բավարարի նշված պահանջներին, իսկ հարց ու պատասխանի ժամանակ շարադրված հասկացությունները և սահմանումները լինեն գրագետ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և սխեմատիկ պատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

Արդյունք 2. Իմանա սպառողների ուսումնասիրությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է բնութագրում սպառողները և նրանց գործունեությունը

բ/ ճիշտ է բնութագրում սպառողների բավարարված և չբավարարված պահանջումների ուսումնասիրությունը:

Գնահատման միջոց՝

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտվում ենք հարց ու պատասխանի և թեսթի մեթոդներից: Հարց ու պատասխանի ժամանակ պետք է պարզել այս թեմայի ընդհանուր հասկացությունների էությունը: Թեստում պետք է ուշադրություն դարձնել այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են սպառողների պահանջումների դասակարգման մոտեցումները, սպառողների

ուսումնասիրության գործընթացը, բավարարված և չբավարարված սպառողների վարքագիծը: Ինչպես նաև կատարում ենք գործնական աշխատանք, որի էությունը կայանում է հետևյալում. քննարկել մի իրավիճակ, երբ հաճախորդը բավարարված չէ բանկի առաջարկած ծառայություններից:

Ստորը նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բնութագրել սպառողներին և նրանց գործունեությունը
- ❖ ներկայացնել սպառողների վարքագծի ուսումնասիրության գործընթացը
- ❖ ներկայացնել բավարարված և չբավարարված սպառողների վարքագիծը:
- ❖ սպառողների պահանջմունքների բավարարվածության աստիճանի որոշման մեթոդները

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեսթը կատարվի անսխալ, իսկ հարց ու պատասխանի ժամանակ շարադրված հասկացությունները և սահմանումները լինեն գրագետ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, սխեմատիկ պատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 3. Իմանալ տեղեկատվությունը և մարքեթինգային հետազոտությունը բանկերում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է բնութագրում տեղեկատվության դերը և նշանակությունը մարքեթինգում

բ/ ճիշտ է ներկայացնում տեղեկատվության տեսակները: Առաջնային և երկրորդային տեղեկատվության ձեռքբերման մեթոդները

գ/ ճիշտ գիտի հարցումը, որպես տեղեկատվության հավաքման ամենատարածված ձև (հարցաթերթիկ):

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտվում ենք թեսթի և գործնական աշխատանքի մեթոդներից: Թեստում պետք է ներառել տեղեկատվության տեսակները, նրանց ձեռք բերման ճիշտ և սխալ մեթոդներ, առաջնային և երկրորդային տեղեկատվության առավելությունները ու թերությունները, ինչպես նաև տեղեկատվություն և տվյալներ հասկացությունները, և անհրաժեշտ կլինի ընտրել ճիշտ տարբերակները: Իսկ գործնական աշխատանքի էությունը կկայանա հետևյալում. կազմել մի որևէ ապրանքի կամ ծառայության ուսումնասիրությանը վերաբերող հարցաթերթիկ՝ պահպանելով հարցաթերթիկի կազմման սկզբունքները:

Ստորը նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բնութագրել տեղեկատվություն և տվյալներ հասկացությունները և նրանց տեղն ու դերը բանկային մարքեթինգում
- ❖ ներկայացնել տեղեկատվության տեսակները, նրանց ձեռք բերման աղբյուրները, և նրանց առավելությունները ու թերությունները

- ❖ ներկայացնել հարցումը որպես տեղեկատվության հավաքման ամենատարածված ձև (հարցաթերթիկ):

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեսթը կատարվի անսխալ, իսկ գործնական աշխատանքը՝ նշված սկզբունքներին համապատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, դասախոսություն, ինչպես նաև գծապատկերներ՝ տեղեկատվության հավաքման մեթոդներին վերաբերող:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 3 ժամ

գործնական պարապունք 3 ժամ

Արդյունք 4. Իմանալ շուկայի սեզմենտավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ գիտի շուկայի սեզմենտավորման (հատվածավորման) հասկացությունը և չափանիշները

բ/ գիտի շուկայի սեզմենտավորման գործընդացը (շուկայի սեզմենտավորում, շուկայի նպատակային սեզմենտի ընտրություն, ապրանքների դիրքավորում շուկայում):

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումը իրականացվելու է իրավիճակային քննարկման և գործնական աշխատանքի միջոցով: Իրավիճակային քննարկման էությունը կայանում է հետևյալում. ներկայացնել և վերլուծել որևէ բանկի օրինակով դրա կողմից սպասարկվող շուկայի սեզմենտը և իրականացվող սեզմենտավորման գործընթացը: Գործնական աշխատանքի էությունը կայանում է հետևյալում. բանկի որևէ նոր ծառայության համար մշակել դիրքավորման ռազմավարություն:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բնութագրել շուկայի սեզմենտավորման հասկացությունը, հատկանիշները և չափանիշները: տեղեկատվություն և տվյալներ հասկացությունները և նրանց տեղն ու դերը բանկային մարքեթինգում
- ❖ ներկայացնել սեզմենտավորման գործընթացի փուլերը:
 - ✓ շուկայի սեզմենտավորում
 - ✓ նպատակային սեզմենտի ընտրություն
 - ✓ ապրանքի դիրքավորումը շուկայում
- ❖ ներկայացնել դիրքավորման ռազմավարությունը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե իրավիճակային քննարկումը ընթանա տրամաբանական և հիմնավորված, իսկ գործնական աշխատանքը կատարվի բավարար հիմունքներով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, դասախոսություն, ինչպես նաև գծապատկերներ, որոնք ակնհայտորեն կբացահայտի ողջ սեզմենտավորման գործընթացը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 3 ժամ

գործնական պարապունք 3 ժամ

Արդյունք 5. Ծանոթանալ բանկի ապրանքային քաղաքականությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է ներկայացնում ապրանք հասկացությունը մարքեթինգում

բ/ գիտի ապրանքի փաթեթավորումը, առևտրային կամ ապրանքային մակնիշ, և ապրանքի կենսացիկլի բնութագրությունը:

գ/ գիտի «Նոր ապրանք» հասկացություն և նրա աստեղծման գործընթացը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացնվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ պետք է ներկայացնել և վերլուծել ապրանքային քաղաքականության ձևավորման գործընթացը, իսկ գործնական աշխատանքի էությունը կկայանա հետևյալում. մշակել և առաջարկել նոր բացվող բանկի առևտրային մակնիշ (ապրանքային նշան, անվանում, կարգախոս, գունային համադրություն...):

Ստորև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ պարզաբանել «ապրանք» հասկացությունը մարքեթինգում և բանկային «ապրանքի» առանձնահատկությունները
- ❖ ներկայացնել առևտրային մակնիշի բաղկացուցիչ տարրերը և ապրանքի կենսացիկլը
- ❖ ներկայացնել «նոր ապրանք» հասկացությունը և նրա ստեղծման գործընթացը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե հարց ու պատասխանի ժամանակ շարադրված հասկացությունները և սահմանումները լինեն գրագետ, ինչպես նաև գործնական աշխատանքը կատարվի պատշաճ մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, գծապատկեր, ապրանքի օրինակներ ապրանքային մակնիշի տարրերը լավ հասկանալու ինչպես նաև դիագրամ՝ ապրանքի կենսացիկլը լավ ներկայացնելու համար:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 3 ժամ

գործնական պարապունք 3 ժամ

Արդյունք 6. Իմանալ բանկի գնային քաղաքականությունը
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է ներկայացնում գինը մարքեթինգում և բանկի գնային ռազմավարությունը
բ/ ճիշտ է ներկայացնում գների սահմանման մեթոդները և դրա վրա ազդող գործոնները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացնվելու համար կատարում ենք վերլուծական քննարկում, որի էությունը հետևյալում է. ներկայացնել և վերլուծել ՀՀ որևէ բանկի գնային քաղաքականություն և համեմատել այլ գնային քաղաքականության հետ: Ինչպես նաև օգտվում ենք թեսթի մեթոդից, որում ներառում ենք գնային ռազմավարության մշակման գործընթացի փուլերի, ելակետային գնի սահմանման փուլերի, ելակետային գնի սահմանման փոփոխության, գնագոյացման նպատակների, մեթոդների, գործոնների ճիշտ և սխալ տարբերակներ, պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել «գինը» մարքեթինգում և բանկի գնային ռազմավարությունը
- ❖ նշել ելակետային գնի սահմանման փուլերը
- ❖ ներկայացնել գնագոյացման նպատակները, հիմնական մեթոդները և ազդող գործոնները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե քննարկումը կատարվի հիմնավորված և գրագետ շարադրված, իսկ թեստը լրացվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և գծապատկեր

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

Արդյունք 7. Ներկայացնել բանկի կոմունիկացիոն քաղաքականությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է բնութագրում մարքեթինգային կոմունիկացիոն համակարգը որպես մարքեթինգային համալիրի կարևորագույն օղակ

բ/ ճիշտ է ներկայացնում անհատական վաճառք, պոռպագանդան (քարոզչություն, իրացման խթանումը որպես մարքեթինգային կոմունիկացիոն համակարգի բաղկացուցիչ մաս

գ/ ճիշտ է ներկայացնում գովազդը: Գովազդային պլանի բաղկացուցիչ մասերի պարզաբանում:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացնվելու համար օգտվում ենք հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի մեթոդներից: Վերջինիս էությունը կայանում է հետևյալում. մշակել որևէ ծառայության, ցանկալի է բանկի օրինակով, կոմունիկացիոն քաղաքականություն: Ինչպես նաև կազմել որևէ ապրանքի գովազդ՝ հիմք ընդունելով գովազդային հայտարարության կառուցվածքային տարրերը:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ Գերկայացնել մարքեթինգային կոմունիկացիոն համակարգը
 - ✓ անհատական վաճառք
 - ✓ պռոպագանդա (քարոզչություն, piar)
 - ✓ իրացման խթանում
 - ✓ գովազդ
- ❖ Գերկայացնել գովադային ռազմավարության հիմնական փուլերը
- ❖ Գերկայացնել գովազդի տարածման հիմնական եղանակները

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե հարց ու պատասխանի շարադրված մտքերը և հասկացությունները լինեն գրագետ ու հիմնավորված, իսկ գործնական աշխատանքը կատարվի պատշաճ մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, գծապատկերներ, պատրաստի գովազդների տեսագրությունները և ձայնագրությունները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

տեսական ուսուցում 3 ժամ

գործնական պարապունք 3 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը` ԲԳՄ- 4 - 09 – 010

Մոդուլի տևողությունը` 36 ժամ

տեսական ուսուցում 18 ժամ

գործնական պարապունք 18 ժամ

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլը նախատեսում է տալ ֆինանսաբանկային ոլորտում աշխատող մասնագետին անհրաժեշտ գիտելիքներ մաթեմատիկական հաշվարկներ կատարելու համար, ուսանողի մոտ զարգացնել տրամաբանելու, ֆինանսական խնդիրների մոդելավորման տարրական եղանակների, ֆունկցիայի ածանցյալի և ինտեգրալի և մոտավոր հաշվարկների եղանակների կիրառման հմտությունները:

Մուտքային մակարդակը` Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

Ուսումնառության արդյունքները`

այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է`

1. կարողանա լուծել գծային և քառակուսային հավասարումներ և անհավասարություններ, հավասարումների համակարգեր և տալ դրանց գրաֆիկական մեկնաբանումը,
2. կարողանա վերլուծել գծային և քառակուսային հավասարումների և անհավասարությունների, հավասարումների համակարգերի լուծումները,

3. կարողանա կիրառել թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաների գումարի բանաձևերը ֆինանսական խնդիրները լուծելիս,
4. իմանա տոկոսների էությունը,
5. իմանա մոտավոր հաշվարկների եղանակները,
6. կարողանա կիրառել ֆունկցիայի սահմանի գաղափարը իրական խնդիրներում,
7. կարողանա կիրառել ֆունկցիայի ածանցյալը ֆինանսական խնդիրներում,
8. կարողանա կատարել տարրական ֆունկցիաների վերլուծություն,
9. կարողանա կիրառել ֆունկցիայի ինտեգրալը ֆինանսական խնդիրներում:

Գնահատման կարգը` Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Պետք է կարողանա լուծել գծային և քառակուսային հավասարումներ և անհավասարություններ, հավասարումների համակարգեր և տալ դրանց գրաֆիկական մեկնաբանումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը`

ա/. ճիշտ է լուծում գծային և քառակուսային հավասարումներ և անհավասարություններ, հավասարումների համակարգեր,

բ/. ճիշտ է տալիս գծային և քառակուսային հավասարումները և անհավասարությունները, հավասարումների համակարգերի լուծումների գրաֆիկական մեկնաբանումը,

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտագործում ենք համակցված թեստ: Այս տիպի թեստը իր մեջ ներառում է թվային և գծապատկերային տեղեկատվություն, որոնք փոխադարձաբար լրացնելով միմյանց թույլ են տալիս մշակել հավասարումների լուծման ճիշտ մարտավարություն:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել գծային և քառակուսային հավասարումները և անհավասարություններ, հավասարումների համակարգեր
- ❖ ներկայացնել գծային և քառակուսային հավասարումները և անհավասարությունները, հավասարումների համակարգերի լուծումների գրաֆիկական մեկնաբանումը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը պատասխանեն կեսից ավելի ճիշտ տարբերամների:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, գրաֆիկական պատկերներ և մաթեմատիկական խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Պետք է կարողանա վերլուծել գծային և քառակուսային հավասարումների և անհավասարությունների, հավասարումների համակարգերի լուծումները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է վերլուծում գծային և քառակուսային հավասարումների լուծումները,

բ/ ճիշտ է վերլուծում հավասարումների համակարգի լուծումները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքի մջջոցով, որը պետք է ընդգրկի առաջադրանքներ, որոնք պանանջում են ընդհանրացված նյութի ըմբռնում:

Ստորոհ նեկայագները արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ Ներկայացնել գծային և քառակուսային հավասարումների վերլուծական տարբերակներ
- ❖ Ներկայացնել հավասարումների համակարգերի վերլուծությունների վերլուծություններ

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե գործնական աշխատանքը կատարվի տրամաբանորեն հիմնավորված ձևերով և դատողություններով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, գրաֆիկական պատկերներ և մաթեմատիկական խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Պետք է կարողանա կիրառել թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաների գումարի բանձները ֆինանսական խնդիրները լուծելիս:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/.ճիշտ է կատարում թվաբանական պրոգրեսիայի օրինաչափությունների կիրառումը ֆինանսական խնդիրներում,

բ/.ճիշտ է կատարում երկրաչափական պրոգրեսիայի օրինաչափությունների կիրառումը ֆինանսական խնդիրներում:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտագործում ենք «կանխատեսումային» թեստ: Այս «կանխատեսումային» տիպի թեստը լուծելիս ուսանողը «պրոգրեսիաներ» թեմայի ուսումնասիրման ժամանակ արդեն ձեռք բերած լինելով որոշակի գիտելիքների, ընդհանրացնում և տոեղափոխում են դրանք նոր՝ ֆինանսական խնդիրների դաշտ:

Ստորոհ նեկայագները արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել թվաբանական պրոգրեսիաների էությունը և դրանց օրինաչափությունների կիրառումը ֆինանսական խնդիրներում,

- ❖ ներկայացնել երկրաչափական պրոգրեսիաների ելությունը և դրանց օրինաչափությունների կիրառումը ֆինանսական խնդիրներում:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Պետք է իմանա տոկոսների տեսության ելությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա./ ճիշտ է պարզաբանում տոկոսային հաշվարկների հիմնական բանաձևերը,

բ./ ճիշտ է պարզաբանում բարդ տոկոսային հաշվարկների հիմնական բանաձևերը,

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացնելու համար օգտագործում ենք ֆինանսամաթեմատիկական խնդիրներ, որոնց միջոցով բացահայտվում է ձեռք բերված գիտելիքների մակարդակը:

Ստորրև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել տոկոսային հաշվարկների հիմնական բանաձևերը
- ❖ ներկայացնել բարդ տոկոսային հաշվարկների բանաձևերը

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե տրված խնդիրների նվազագույնը կեսը ճիշտ կատարվեն:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Պետք է իմանա մոտավոր հաշվարկների եղանակները,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա./ ճիշտ է ներկայացնում գծային ինտերպոլացիայի եղանակը

բ./ ճիշտ է ներկայացնում Գծային ինտերպոլացիայի եղանակով պարամետրերի և գործակիցների հաշվարկը

գ./ ճիշտ է ներկայացնում իտեռացիաների եղանակը

դ./ ճիշտ է ներկայացնում իտեռացիաների եղանակով բարձր աստիճանի հավասարումների լուծումը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստի միջոցով, որոնք պետք է ընդգրկի առաջադրանքներ, որոնք պահանջում են ընդհանրացված նյութի իմացություն:

Ատորըն նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել մոտավոր հաշվարկների եռթյունը և հաշվարկման եղանակները,
- ❖ ներկայացնել գծային ինտերպոլիացիայի եղանակը,
- ❖ ներկայացնել գծային ինտեռացիաների եղանակները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Պետք է կարողանա կիրառել ֆունկցիայի սահմանի գաղափարը իրական խնդիրներում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի սահմանի սահմանումը և իմաստը,

բ/ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի սահմանի հաշվարկների պարզ եղանակները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստի միջոցով: Առաջարկված թեստը պետք է չափորոշի հիմնական հասկացությունների, սահմանումների և հիմնական հաշվարկման եղանակների և այլնի իմացությունը:

Ատորըն նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել ֆունկցիայի սահմանի սահմանումը և իմաստը,
- ❖ ներկայացնել ֆունկցիայի սահմանի հաշվարկման պարզ եղանակները

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Պետք է կարողանա կիրառել ֆունկցիայի ածանցյալը ֆինանսական խնդիրներում,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է կիրառում ֆունկցիայի ածանցյալի սահմանումը

բ/ճիշտ է կիրառում ֆունկցիայի ածանցյալի երկրաչափական իմաստը

գ/ճիշտ է կիրառում ֆունկցիայի էկստրեմումները՝ մաքսիմումը, մինիմումը և շրջման կետը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է վարժությունների և թեստի միջոցով, որը կբացահայտի հիմնական հասկացությունների և սահմանումների, ձեռք բերած գիտելիքների մակարդակը: Իսկ վարժությունների միջոցով հիմնական բանաձևերի կիրառման կարողությունները:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել ֆունկցիայի ածանցյալի սահմանուկը և երկրաչափական իմաստը,
- ❖ ներկայացնել ածանցյալը հաշվելու հիմնական բանաձևերը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի կիսով չափ ճիշտ, իսկ վարժությունները կատարվեն համարյա անթերի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, խնդրագրքեր, ինչպես նաև բանաձևներով համալրված գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 8. Պետք է կարողանա կատարել տարրական ֆունկցիաների վերլուծություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի ածանցյալի կիրառումը ֆունկցիաների վերլուծության մեջ

բ/ճիշտ է ներկայացնում. ֆունկցիայի ածանցյալի դերը ֆունկցիայի էության պարզաբանման մեջ:

գ/ճիշտ է ներկայացնում. ֆունկցիայի ածանցյալի դերը ֆունկցիաների գծապատկերների կառուցման մեջ:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գծապատկերային թեստի միջոցով, որի լուծման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ամփոփված է տրված գրաֆիկների մեջ:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել ֆունկցիայի ածանցյալի կիրառումը ֆունկցիայի վերլուծության մեջ,
- ❖ ներկայացնել ածանցյալի դերը ֆունկցիայի գծապատկերների կառուցման մեջ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստը կատարվի կիսով չափ ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, խնդրագրքեր, ինչպես նաև ածանցյալի ֆունկցիայի բանաձևներով համալրված գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 9. Պետք է կարողանա կիրառել ֆունկցիայի ինտեգրալը ֆինանսական խնդիրներում:
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.**

ուսանողը՝

ա/ճիշտ է ներկայացնում ֆունկցիայի ինտեգրալի իմաստը,
բ/ճիշտ է ներկայացնում ինտեգրալի կիրառման օրինակները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է վարժությունների կատարման միջոցով:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ներկայացնել ֆունկցիայի ինտեգրալի իմաստը
- ❖ ներկայացնել ինտեգրալի կիրառման եղանակները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե տրված վարժությունները կատարվեն համարյա անսխալ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, խնդրագրքեր, ինչպես նաև ածանցյալի ֆունկցիայի բանաձևներով համալրված գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 4 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապումը 2 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը ԲԳՄ-4-09-011

Մոդուլի տևողությունը՝ 90 ժամ

տեսական ուսուցում 48 ժամ

գործնական պարապումը 42 ժամ

Մոդուլի նպատակը՝ մոդուլը ուսումնասիրելիս ուսանողը պետք է ծանոթանա բանկային գործի ստեղծման հիմնապատճառներին, բանկերի էությանը և գործառնություններին, բանկային համակարգին, բանկերի տեսակներին, կազմակերպարավական կառուցվածքին, բանկային ռիսկերին, գործունեության և կարգավորման հիմունքներին:

Մուտքային պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները.

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է իմանա՝

1. բանկերի ծագումը, էությունը և գործառնությունները: Բանկային համակարգը և նրա ձևավորումը:
2. բանկերի դասակարգումը և բանկերի տեսակները:
3. բանկերի կազմակերպարավական կառուցվածքը , կառավարման մարմինները և նրանց իրավասությունները:

4. բանկերի ֆինանսական միջոցները և առանձնահատկությունները:
5. բանկերի կառավարման հիմունքները:
6. բանկերի գործունեության կարգավորման հիմունքները:
7. բանկային ռիսկերը, տեսակները, գնահատման եղանակները և կառավարման մեթոդները:
8. բանկերի գործունեության գնահատումը և բանկային համակարգի զարգացման միտումները:

Գնահատման կարգը

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ բանկերի ծագումը, էությունը և գործառույթները: Բանկային համակարգը և նրա ձևավորումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

- ա. ճիշտ ներկայացնել բանկային գործի ծագման հիմնապատճառները և հետագա զարգացումը, ինչպես նաև ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությունը,
- բ. ճիշտ բնութագրել բանկերի էությունը և ներկայացնել բանկի տնտեսական բովանդակությունը: ,
- գ. ճիշտ ներկայացնել բանկերի դերը տնտեսության զարգացման գործում,
- դ. ճիշտ բնութագրել բանկերի առանձնահատկությունները,
- ե ճիշտ ներկայացնել բանկի գործառույթները և գործառնությունները,
- զ.ճիշտ ներկայացնել բանկային համակարգը մի շարք զարգացած երկրներում և Հայաստանի Հանրապետությունում:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է թեմատիկ աշխատանքի միջոցով: Հարց ու պատասխանով պարզվում է ուսանողի գիտելիքները բանկի էության, առանձնահատկությունների վերաբերյալ: Թեստի միջոցով պարզել ուսանողի գիտելիքները բանկային գործառնությունների վերաբերյալ:

Գործնական աշխատանքի արդյունքում ուսանողը ներկայացնում է ռեֆերատ՝ միջազգային և ՀՀ բանկային համակարգը, ինչպես նաև բանկերի դերը տնտեսության մեջ:

Ստորըև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ միջնորդություն վարկավորման գործում
- ❖ դրամական եկամուտների խնայողությունների տեսքով հավաքագրում և դրանց վերածումը կապիտալի
- ❖ միջնորդություն վճարումներում
- ❖ շրջանառության վարկային գործիքների ստեղծում:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե հարց ու պատասխանը գրագետ և ճիշտ է շարադրել մտքերը: Թեստը կատարված է կիսով չափ ճիշտ:

Գործնական աշխատանքի արդյունքում ռեֆերատը ճիշտ է շարադրված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, մասնագիտական գրականություն, գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապումը 6 ժամ

Արդյունք 2. Տալ բանկերի դասակարգումը ըստ տարբեր հատկանիշների և կարողանա բնութագրել բանկերի տեսակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ ներկայացնել բանկերի դասակարգումը ըստ տարբեր հատկանիշների,

բ. ճիշտ բնութագրել բանկերի տարբեր տեսակները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստի միջոցով, որպեսզի բնութագրի բանկերի տեսակները և նրանց հատկանիշները:

Ստորոհ նեկայագները արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ Կենտրոնական բանկ(էմիսիոն)
- ❖ առևտրային
- ❖ կոոպերատիվ
- ❖ ՍՊԸ
- ❖ բաժնետիրական
- ❖ ըստ գործունեության բնույթի
 - ✓ ունիվերսալ
 - ✓ մասնագիտացված

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի հարցերին տրված է լիարժեք պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, ինչպես նաև մասնագիտական գրականություն, գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապումը 6 ժամ

Արդյունք 3. Ներկայացնել բանկերի կազմակերպարավական կառուցվածքը և կառավարման մարմինները: Բնութագրել բանկերի կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործառնությունները և կառավարման մարմինների իրավասությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ ներկայացնել բանկերի կազմակերպարավական կառուցվածքները,

բ. ճիշտ ներկայացնել բանկերի կառավարման մարմինները և նրանց հիմնական իրավասությունները,

գ. ճիշտ ներկայացնել բանկերի կազմակերպահրավական կառուցվածքը և նրանց ստորաբաժանումները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է համակցված թեստի միջոցով, որում պետք է ներկայացվի բանկերի դասակարգումը ըստ տարբեր հատկանիշների և առևտրային բանկերի կառուցվածքը:

Գործնական աժխատանքի ժամանակ ուսանողը պետք է գծապատկերի բանկերի կառուցվածքային ստորաբաժանումները և նրանց գործառույթները, բանաձևով կատարի շահույթի հաշվարկ: Հարց ու պատասխանի միջոցով պարզել բանկերի կառավարման մարմինները և նրանց իրավասությունները:

Ստորոկ նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բաժնետիրական (ԲԲԸ, ՓԲԸ) բանկեր
- ❖ փայտտիրական (ՍՊԸ) բանկեր
- ❖ կոոպերատիվ բանկեր

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը թեստին տա լիարժեք ու գրագետ պատասխան: Գործնական աժխատանքը ճիշտ է կատարված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, ինչպես նաև մասնագիտական գրականություն, տարբեր գծապատկերներ, սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 12 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 4. Ներկայացնել բանկերի ֆինասական միջոցները և առանձնահատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ բացատրել առևտրային բանկերի միջոցների գոյացման աղբյուրները և դրանց կառուցվածքը:

բ. ճիշտ ներկայացնել բանկերի կապիտալի հիմնական գործառույթները:

գ. ճիշտ բացատրել և բնութագրել բանկերի ակտիվների կառուցվածքը և որակը:

դ. ճիշտ տալ ակտիվների դասակարգումը ըստ տարբեր հատկանիշների:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աժխատանքի և թեստի միջոցով, որը պետք է ընդգրկի միջոցների գոյացման աղբյուրները ու կառուցվածքը և կապիտալի հիմնական գործառույթները:

Գործնական աժխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարել գծապատկերով ներկայացնել բանկերի ակտիվների որակը և կառուցվածքը:

Ստորոկ նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ դրամական միջոցներ
- ❖ արժեթղթերում ներդրումներ
- ❖ փոխատվություններ

❖ հիմնական միջոցներ

Արդյունքի ձեռք բերումը կհամարվի բավարար, երբ թեստի գրեթե բոլոր հարցերին տրվել է ճիշտ պատասխան: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը կարողանում է հստակ շարադրել իր մտքերը: Գործնական աշխատանքի հանձնարարությունը ճիշտ է կատարված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, ինչպես նաև մասնագիտական գրականություն, գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 5. Իմանալ բանկերի կառավարման հիմունքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա. ճիշտ բնութագրել բանկի գործունեության հիմնական սկզբունքները:

բ. ճիշտ ներկայացնել բանկերի ռեսուրսների կառավարման մի շարք մեթոդներ:

գ. ճիշտ բացատրել բանկերի վճարունակությունը, իրացվելիությունը և դրանց վրա ազդող գործոնները:

դ. ճիշտ բացատրել բանկերի աղբյուրները, ծախսերի տարրերը և շահութաբերությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում գործնական աշխատանքի և թեստի միջոցով: Այն պետք է ընդգրկի առաջադրանքներ, որոնք պահանջում են սովորած նյութի ըմբռնում բանկերի գործունեության հիմնական սկզբունքների, բանկի իրացվելիությանը, վճարունակությանը, շահութաբերության վերաբերյալ:

Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարել հաշվարկային բանաձևերի օգնությամբ հաշվարկել շահույթի տեսակները:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բանկի ռեսուրսները
- ❖ բանկի սեփական միջոցները
- ❖ կապիտալի ֆունկցիաները
- ❖ բանկի ներգրավված միջոցները

Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե ուսանողը կարողանա տալ թեստում առաջադրված հարցերին ճիշտ պատասխաններ: Գործնական աշխատանքի կատարումը կհամարվի բավարար, եթե ուսանողը հաշվարկային բանաձևերով կարողանա հաշվարկել և վերլուծել իրավիճակները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, ինչպես նաև գծապատկերներ, սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 12 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 6. Իմանալ բանկերի գործունեության կարգավորման հիմունքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

- ա. ճիշտ ներկայացնել բանկերի գործունեության կարգավորման նախադրյալները:
- բ. ճիշտ ներկայացնել բանկերի գործունեության լիցենզավորման գործընթացը:
- գ. ճիշտ բացատրել բանկերի գործունեության կարգավորումը, մասնավորապես տնտեսական նորմատիվների համակարգը:
- դ. ճիշտ ներկայացնել բանկերի գործունեության վերահսկման գործընթացը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստի և հարց ու պատասխանի միջոցով: Վերջինս պետք է բացատրի բանկերի լիցենզավորման կարգը, փուլերը, ընթացակարգը, ինչպես նաև ԿԲ-ի դերը որպես բանկերի գործունեությունը կարգավորող և վերահսկող անձ: Թեստի միջոցով պետք է ստուգվի տնտեսական նորմատիվների համակարգը, որը և կբացահայտի ձեռք բերված գիտելիքների մակարդակը:

Ստորըև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բանկերի լիցենզավորման ըթացակարգը
- ❖ բանկերի սնանկության պատճառները և ընթացակարգը
- ❖ ԿԲ-ի դերը բանկերի գործունեության կարգավորման գործում

Արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար, եթե հարց ու պատասխանի ընթացքում ուսանողը գրագետ և մասնագիտական լեզվով կարողանում է շարադրել մտքերը: Իսկ թեստը ճիշտ է կատարված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, մասնագիտական գրականություն, «Բանկերի լիցենզավորման մասին», «Բանկերի սնանկության մասին» ՀՀ օրենքներ, սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 16 ժամ

տեսական ուսուցում 10 ժամ

գործնական պարապումը 6 ժամ

Արդյունք 7. Իմանալ բանկերի ռիսկերը, տեսակները, գնահատման եղանակները և կառավարման մեթոդները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

- ա. ճիշտ բացատրել ռիսկ հասկացությունը:
- բ. ճիշտ ներկայացնել ռիսկերի հիմնական տեսակները:
- գ. ճիշտ բացատրել ռիսկերի գնահատման եղանակները:
- դ. ճիշտ ներկայացնել ռիսկերի կառավարման քաղաքականությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը պետք է ընդգրկի առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի ըմբռնում: Այն պետք է ներառի բանկային ռիսկի, տեսակների գնահատման հարցերը: Գործնական աշխատանքին հանձնարարել բանկային ռիսկերին վերաբերող իրավիճակային խնդիրներ:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բանկերի ռիսկերի տեսակները
- ❖ երկրի ռիսկ
- ❖ ֆինանսական ռիսկ
- ❖ շուկայական ռիսկ
- ❖ տնտեսական ռիսկ
- ❖ օրենսդրական ռիսկ

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի բոլոր հարցերին տրվել են բավարար պատասխաններ: Գործնական աշխատանքը կատարել է բավարար մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, ինչպես նաև գծապատկերներ և սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 12 ժամ

տեսական ուսուցում 6 ժամ

գործնական պարապումը 6 ժամ

Արդյունք 8. Իմանալ բանկերի գործունեության գնահատումը և բանկային համակարգի զարգացման միտումները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

- ա. ճիշտ ներկայացնել ՀՀ տարածքում գործող բանկերի ամփոփ պատկերը,
- բ. ճիշտ բացատրել ՀՀ բանկերի համակարգի կապիտալի վրա ազդող գործոնները,
- գ. ճիշտ բացատրել ՀՀ բանկերի համակարգի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը,
- դ. ճիշտ բացատրել ՀՀ բանկերի համակարգի շահութաբերությունը, իրացվելիությունը,
- ե. ճիշտ ներկայացնել մրցակցությունը և համագործակցությունը ՀՀ բանկերի համակարգում,
- զ. ճիշտ մեկնաբանել բանկերի գնահատման չափանիշները տարբեր համակարգերով:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որում պետք է ներկայացվի ՀՀ տարածքում գործող բանկերի ամփոփ պատկերը, ՀՀ բանկերի կապիտալի վրա ազդող գործոնները, ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը:

Գործնական աշխատանքի ընթացքում հանձնարարել ուսանողին հաշվարկային բանաձևերի օգնությամբ հաշվարկել բանկերի շահութաբերությունը, իրացվելիությունը:

Գծապատկերի միջոցով ցույց տալ CAMELS համակարգում որևէ պայմանական բանկի տեղը բանկային համակարգում:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ բանկային համակարգի զարգացման միտումները
- ❖ ՀՀ բանկային համակարգի ակտիվները
- ❖ ՀՀ բանկային համակարգի պարտավորությունները

❖ մրցակցությունը ՀՀ բանկային համակարգում:

Արդյունքի գնահատումը համարվում է բավարար, եթե թեստը կատարված է պատշաճ մակարդակով և գործնական աշխատանքի հաշվարկները ճիշտ են կատարված:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, մասնագիտական գրականություն, սխեմաներ, գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԲԱՆԿԵՐՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ ՀՀԲ-04-09-012

Մոդուլի տևողությունը՝ 108 ժամ:

տեսական ուսուցում 40 ժամ

գործնական պարապունք 68 ժամ

Մոդուլի նպատակը՝ ուսանողին ծանոթացնել և ապահովել բանկային գործառնությունների հաշվապահական հաշվառման տեսական գիտելիքներ: Ծանոթացնել ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ տարրերին: Ուսանողները հնարավորություն են ստանում ինքնուրույն տիրապետել և հաշվառել այնպիսի ֆինանսական գործառնություններ, իչպիսիք են վարկերի տրամադրումը, հաշվառումը, ակտիվների հնարավոր կորուստների պահուստի ճանաչումը ու ձևավորումը և հաշվառումը, ավանդների ներգրավումը, վերադարձը, նրա հաշվառումը, կանխիկ և անկանխիկ գործառնությունների հաշվառումը, արտարժույթային և պլաստիկ քարտերով գործառնությունների հաշվառումը և այլն:

Մուտքային պահանջներ՝ հաշվապահական հաշվառման հիմունքներ՝ «ՀՀԲ-4-09-003» մոդուլի իմացություն:

Ուսումնառության արդյունքները.

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա հաշվապահական հաշվառման հայեցակարգը:
2. իմանա հաշվապահական հաշվառման ստանդարտների նպատակն ու համառոտ նկարագրությունը:
3. իմանա բանկերի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ տարրերը
4. իմանա բանկերի հաշվառման հաշիվների պլանը:
5. իմանա հաշվապահական տեղեկատվության ձևավորման նկարագիրը:
6. իմանա դրամական միջոցներ և դրամագիտական արժեքները:
7. իմանա արտարժույթային գործառնությունների հաշվառում:
8. իմանա ավանդների հաշվառումը:
9. իմանա պլաստիկ քարտերով գործառնությունների հաշվառում:

10. Իմանա կապիտալի հաշվառումը:

11. Իմանա վարկերի հաշվառումը

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանա հաշվապահական հաշվառման հայեցակարգը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/. ճիշտ է ներկայացնում բանկերի հաշվապահական հաշվառումը կարգավորող և կանոնակարգող նորմատիվ ակտերը,

բ/. ճիշտ է ներկայացնում այն որակական պահանջները, որոնք ընկած են բանկի հաշվապահական հաշվառման և հաշվետվական համակարգի հիմքում,

գ/. ճիշտ է ներկայացնում տեղեկատվական ռիսկ առաջացնող գործոնների նկարագրությունը և դրանց առանձնակի կարևորումը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստի միջոցով , որը պետք է ներառի ֆինանսական հաշվետվության տարրերը, հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը, ֆինանսական ակտերը:

Ստորև ներկայացվում է կատարման չափանիշի մանրամասները

- ❖ ՀՀ օրենքը «հաշվապահական հաշվառման մասին»
- ❖ ֆինանսական հաշվետվության տարրերը
- ❖ տեղեկատվական ռիսկ առաջացնող գործոնների նկարագրությունը

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի բոլոր հարցերին տրվում է սպառիչ պատասխան:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 2. Իմանալ հաշվապահական հաշվառման ստանդարտների նպատակն ու համառոտ նկարագրությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման ստանդարտների սահմանումը,

բ/ ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման ստանդարտների կիրառման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում,

զ/ ճիշտ է ներկայացնում բանկերում կիրառվող հաշվապահական հաշվառման «ՀՀՀՀՍ-1»և«ՀՀՀՀՍ-30» ստանդարտները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը կներառի ՀՀՀՀՍ նպատակը և նկարագրությունը, ՀՀՀՀՍ-ից բանկերում օգտագործվող ստանդարտները և դրանց բնութագիրը, հաշվապահական հաշվեկշռի աղյուսակը և բովանդակությունը:

Գործնական աշխատանքի ժամանակ հանձնարարել ուսանողին կազմել հաշվեկշռի աղյուսակ տրված խնդրի համար:

Ստորև ներկայացվում է կատարման չափանիշի մանրամասները

- ❖ ՀՀՀՀՍ- ի կիրառման անհրաժեշտությունը
- ❖ բանկային համակարգում օգտագործվող ստանդարտները
- ❖ հաշվապահական հաշվեկշռը և բովանդակությունը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի հարցերին տրվել է սպառիչ պատասխան:

Գործնական աշխատանքի արդյունքում կարողանում է կազմել հաշվեկշիռ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև «ՀՀՀՀՍ-1»և«ՀՀՀՀՍ-30» ստանդարտները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 3. Իմանալ բանկերի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ տարրերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է ներկայացնում հաշվեկշիռը իր ակտիվային և պասիվային մասերով

բ/ ճիշտ է ներկայացնում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կազմման սկզբունքը

գ/ ճիշտ է ներկայացնում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության կազմման սկզբունքները

դ/ ճիշտ է ներկայացնում սեփական կապիտալի փոփոխության վերաբերյալ հաշվետվետվության կազմման սկզբունքը

ե/ ճիշտ է ներկայացնում ֆինանսական հաշվետվությանն կից ծանոթագրությունը և հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը պետք է պարզի ուսանողի գիտելիքները ֆինանսական հաշվետվության կազմման, դրամական միջոցների հոսքերի հաշվետվության կառուցվածքի վերաբերյալ:

Գործնական աշխատանքի ընթացքում հանձնարարել ուսանողին կազմել դրամական միջոցների հոսքերի հաշվետվություն:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները
- ❖ դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունների կառուցվածքը
- ❖ հաշվետվության կազմումը

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի բոլոր հարցերին տրվել է բավարար պատասխան:
Գործնական աշխատանքը կատարվել է բավարար մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն և դրամական միջոցի հոսքերի հաշվետվության օրինակ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 4. Իմանալ բանկերի հաշվառման հաշիվների պլանը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է ներկայացնում բանկերի հաշվապահական հաշվառման պլանը

բ/ ճիշտ է ներկայացնում բանկարի հաշվային պլանի կազմման կառուցվածքը և կազմման սկզբունքները

գ/ ճիշտ է դասակարգում բանկերի հաշվային պլանում ակտիվները և պարտավորությունները ըստ խմբերի և ենթախմբերի:

Գնահատման միջոց

Այս արդյունքը գնահատելիս հիմք է ընդունվել գործնական աշխատանքը, որի ժամանակ ուսանողը կարողանա ճիշտ օգտվել հաշվային պլանից ցանկացած սինթետիկ հաշիվ գտնելու համար:

Ստորոհ նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ հաշվային պլանի կազմման սկզբունքները
- ❖ հաշվային պլանի կարգերը, բաժինները, ենթաբաժինները և քառանիշ հաշիվները
- ❖ անալիտիկ և սինթետիկ հաշիվներ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե գործնական աշխատանքի արդյունքը դրական է:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, խնդրագրքեր, ինչպես նաև հաշվային պլան:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 12 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 8 ժամ

Արդյունք 5. Իմանալ հաշվապահական տեղեկատվության ձևավորման նկարագիրը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքը

բ/ ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման գրքերում ֆինանսական տեղեկատվության գրանցումը

զ/ ճիշտ է ներկայացնում վերլուծական և ընդհանրացման հաշվապահական հաշվառման անհրաժեշտությունը

դ/ ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման տեղեկատվության ձևավորման ցիկլը:

Գնահատման միջոց

Արդյունքը գնահատելիս օգտագործել գործնական աշխատանք և թեստ, որի միջոցով կբացահայտվի ուսանողի գիտելիքները հաշվապահական տեղեկատվության ձևավորման ցիկլի քայլերի, սկզբնական փաստաթղթերի վավերապայմանների վերաբերյալ:

Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին առաջադրել խնդիր սկզբնական փաստաթղթերի հիման վրա գործառնությունների վերլուծության վերաբերյալ:

Ստորև ներկայացվում է արդյունքի մանրամասները

- ❖ հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքը
- ❖ գրանցամատյաններում գործառնությունների գրանցման կարգը
- ❖ գործառնությունների վերլուծություն սկզբնական փաստաթղթերի հիման վրան շահույթի մասին հաշվետվության կազմում
- ❖ հաշիվների ճշտգրված գրառումներով հաշվեկշռի կազմում:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը թեստով առաջադրված հարցերին տվել է բավարար պատասխան:

Գործնական աշխատանքը կատարել է ամբողջությամբ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, գլխավոր գրքի օրինակ, ինչպես նաև աղյուսակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 12 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 8 ժամ

Արդյունք 6. Իմանալ դրամական միջոցներ և դրամագիտական արժեքները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է բնութագրում դրամական միջոցները,

բ/ ճիշտ է ներկայացնում դրամական միջոցների պահպանման հսկողության պահանջները և ներքին հսկողության ընթացակարգերը,

գ/ ճիշտ է ներկայացնում դրամական միջոցների հաշվառումը բանկերում

դ/ ճիշտ է ներկայացնում դրամագիտական արժեքների տեսակները և դրանց հաշվառման առանձնահատկությունները:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը պետք է պարզի ուսանողի գիտելիքները «Դրամական միջոցներ» հոդվածի տարրերի, կախիկին հավասարեցված վճարային փաստաթղթերի, դրամագիտական արժեքների տեսակների վերաբերյալ:

Գործնական աշխատանքի ընթացքում հանձնարարել ուսանողին դրամական միջոցներով գործառնությունների գրանցման խնդիր:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ «Դրամական միջոցներ» հոդվածը և տարրերը
- ❖ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր
- ❖ դրամական միջոցներով գործառնությունների գրանցումը գրանցամատյանում
- ❖ դրամագիտական արժեքները, տեսակները և առանձնահատկությունները

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, գրանցամատյան և սխեմաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 4 ժամ

Արդյունք 7. Իմանալ արտարժույթային գործառնությունների հաշվառում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է ներկայացնում արժույթի և արտարժույթի սահմանումները և տարբերությունները

բ/ ճիշտ է ներկայացնում արտարժույթային գործառնությունների տեսակները

գ/ճիշտ է ներկայացնում արտարժույթային գործառնությունների հաշվապահական հաշվառումը և հաշվառման առանձնահատկությունները

դ/ ճիշտ է ներկայացնում արտարժույթի վերագնահատումը և հաշվառումը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում գործնական աշխատանքում միջոցով: Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողը պետք է լուծի խնդիրներ՝ արտարժույթի տարբեր գործառնությունների վերաբերյալ:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ արտարժույթային գործառնությունների ճանաչումը
- ❖ հաշվառման առանձնահատկությունները
- ❖ արտարժույթային գործառնությունների տեսակները
- ❖ արժույթի վերագնահատում և հաշվառում

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե գործնական աշխատանքի արդյունքում ուսանողը կարողանում է լուծել արտարժույթային տարրերի գործառնությունների վերաբերյալ խնդիրներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն ինչպես նաև խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 8. Իմանալ ավանդների հաշվառումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/. գիտի ավանդների տեսակները

բ/. ճիշտ է ներկայացնում ավանդների ներգրավված և վերադարձի հաշվապահական հաշվառումը

գ/. ճիշտ է հաշվառում ավանդների տոկոսագումարները (տոկոսագումարի կապիտալիզացիա)

դ/. ճիշտ է կատարում ավանդների դիմաց տոկոսագումարների հաշվեգրման և մարման հաշվապահական հաշվառումը

ե/. գիտի ավանդներին վերաբերվող ներքին վերահսկողության հարցերը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի թեստի միջոցով :Թեստը պետք է ընդգրկի ավանդների բնութագիրը, դեպոզիտային հաշիվների դասակարգումը հարցերը:

Գործնական աշխատանքի ընթացքում ուսանողին հանձնարարել խնդիրներ դեպոզիտների գրանցման գործառնությունների վերաբերյալ:

Գործնական աշխատանքի ընթացքում հաշվել պարզ և բարդ տոկոսադրույքներ:

Ստորոև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ դեպոզիտների ավանդների տեսակները
- ❖ ավանդների ներգրավված և վերադարձի հաշվապահական հաշվառումը
- ❖ պարզ և բարդ տոկոսների հաշվարկում
- ❖ տոկոսագումարների հաշվեգրում և մարման հաշվառում
- ❖ ավանդներին վերաբերվող ներքին վերահսկողություն:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե թեստի արդյունքը դրական է:

Գործնական աշխատանքը լիարժեք է կատարել:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն ինչպես նաև խնդրագրքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 8 ժամ

Արդյունք 9. Իմանա պլաստիկ քարտերով գործառնությունների հաշվառումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/ ճիշտ է ներկայացնում պլաստիկ քարտերի տեսակները

բ/ ճիշտ է ներկայացնում պլաստիկ քարտերի հաշվապահական հաշվառման մոտեցումները

գ/ ճիշտ է ներկայացնում պլաստիկ քարտերով օվերդրաֆտի տրամադրման հաշվառումը

դ/ ճիշտ է ներկայացնում բանկոմատով կատարված կանխիկ և անկանխիկ գործառնությունների հաշվառումը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի միջոցով, որը պետք է պարզի ուսանողի գիտելիքները պլաստիկ քարտերով կատարվող գործառնությունների հաշվառումը:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ դեբետային քարտերի հաշվառում
- ❖ կրեդիտային քարտերի հաշվառում
- ❖ բանկոմատով կատարված գործառնությունների հաշվառում

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, ինչպես նաև ձևի պլաստիկ քարտերի օրինակներ, պայմանագրեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

տեսական ուսուցում 2 ժամ

գործնական պարապունք 6 ժամ

Արդյունք 10. Իմանալ կապիտալի հաշվառումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ:

ուսանողը կարողանում է՝

ա/ ճիշտ ներկայացնել հաշվեկշռի «Կապիտալ» բաժնի տարրերը

բ/ ճիշտ ներկայացնել բանկի կանոնադրական կամիտալի համալրման գործընթացի հաշվառումը

գ/ ճիշտ ներկայացնել գլխավոր պահուստի ձևավորմը և հաշվառման առանձնահատկությունը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է թեմատիկ աշխատանքի ձևով, որը իր մեջ ներառում է հարց և գործնական աշխատանք: Հարց ու պատասխանով ստուգվում է ուսանողի գիտելիքները կապիտալի տարրերի, ընդհանուր կապիտալի մասերի և կապիտալի ձևավորման հետ կապված հարցերը:

Գործնական աշխատանքի միջոցով ստուգվում է կապիտալի առանձին տարրերի գործառնությունների մատյանում գրանցելու ունակությունները:

Ստորրև նեկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ կապիտալի տարրերը
- ❖ ընդհանուր կապիտալի մասերը
- ❖ կապիտալի համալրման գործընթացի հաշվառումը
- ❖ գլխավոր պահուստի ձևավորումը և հաշվառումը

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե հարց ու պատասխանի արդյունքը բավարար է:

Գործնական աշխատանքը կատարված է բավարար մակարդակով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, խնդրագրքեր, ինչպես նաև գրանցումների մատյան:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ
գործնական պարապումք 6 ժամ

Արդյունք 11. Իմանալ վարկերի հաշվառումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը կարողանում է՝

ա/ ճիշտ ներկայացնել տրամադրվող վարկերի տեսակները

բ/ ճիշտ ներկայացնել տրամադրված վարկերի հաշվառման առանձնահատկությունը

գ/ ճիշտ ներկայացնել վարկերի դասակարգումը և պահուստների ձևավորումը

դ/ ճիշտ ներկայացնել տրամադրված վարկերի դիմաց հաշվեգրվող տոկոսագումարների հաշվառումը

ե/ ճիշտ ներկայացնել վարկերի մարման գրաֆիկները և դրանց համաձայն կատարված մարումների հաշվապահական հաշվառումը

զ/ ճիշտ ներկայացնել չաշխատող ակտիվների հասկացությունը և այդպիսի դասված ակտիվների հաշվառման առանձնահատկությունները, անհուսալի դասված վարկերի դուրսգրման գործընթացը և դուրսգրված վարկերի հաշվառումը հետհաշվեկշռում, դուրսգրված վարկերի հաշվեկշռում վերականգնման և վարկի ամբողջովին մարման գործընթացի հաշվապահական հաշվառում, բռնագանձված գրավի հաշվառումը, ճիշտ ներկայացնել լիզինգի հաշվառումը:

Գնահատման միջոց

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի և թեստի միջոցով, որը պետք է ընդգրկի տրամադրվող վարկի տեսակները, տրամադրված վարկերի հաշվառման առանձնահատկությունները, վարկերի դասակարգումը և պահուստների ձևավորումը:

Գործնական աշխատանքի ժամանակ ուսանողին առաջադրվում է հաշվարկել վարկի տոկոսային եկամուտը, տալ առաջադրված խնդիրների հաշվապահական ձևակերպումը:

Ստորև ներկայացնենք արդյունքի կատարման մանրամասները:

- ❖ տրամադրվող վարկերի տեսակները
- ❖ վարկերի հաշվառման առանձնահատկությունները
- ❖ վարկերի դասակարգումը և պահուստների ձևավորում
- ❖ վարկերի հաշվառման հաշվապահական ձևակերպումները

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կատարել է թեստի

Գործնական աշխատանքը կատարել է բավարար չափով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի ուսուցումը իրականացնելու համար օգտագործում ենք մասնագիտական գրականություն, ինչպես նաև դասակարգումներով համալրված գծապատկերներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 10 ժամ

տեսական ուսուցում 4 ժամ
գործնական պարապումք 6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ EXCEL ԿԾՓ-Ի ՄԻԶԱՎԱՅՐՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԲԳՄ-4-09-013**

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ:

տեսական ուսուցում 24 ժամ

գործնական պարապումը 48 ժամ

Մոդուլի նպատակը՝ «Ֆինանսական հաշվարկներ **EXCEL ԿԾՓ**-ի միջավայրում» մոդուլի նպատակն է մատուցել ունկնդրին ֆինանսա - բանկային ոլորտի գործնական խնդիրների մոդելավորման և լուծման մեթոդիկական **EXCEL ԿԾՓ**-ի միջավայրում, որին շուկայական տնտեսության պայմաններում պարտադիր պետք է տիրապետեն բոլոր գրագետ մասնագետները:

Մուտքային պահանջները՝ համակարգչային օպերատրություն և ֆինանսական մաթեմատիկա՝ «ՖԻՆՄ-4-09-009» մոդուլի իմացություն:

Ուսումնառության արդյունքները՝

այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա **EXCEL ԿԾ Փ**աթեթում ներմուծված ֆինանսական, մաթեմատիկական, վիճակագրական և տրամաբանական կատեգորիաների ֆունկցիաների կիրառումը ֆինանսական խնդիրների մոդելավորման, լուծման և լուծման մինի ծրագրերի ստեղծման գործընթացը
2. իմանա տարրական ֆինանսական հոսքեր՝ հաշվարկներ պարզ և բարդ տոկոսադրույքների դեպքում, էությանը տարբեր տոկոսադրույքների հաշվարկներ,
3. իմանա պարբերական ֆինանսական հոսքերի՝ ռենտաների ամփոփոխ բնութագրիչների հաշվարկներ պարզ և բարդ տոկոսադրույքների դեպքում
4. իմանա կարծաժամկետ և երկարաժամկետ վարկերի հետ կապված հաշվարկները, տարբեր եղանակներով վարկերի մարման պլանների կազմումը,
5. իմանա ֆինանսավարկային գործառնությունների եկամտաբերության հաշվարկները,
6. իմանա ֆինանսավարկային գործառնությունների հաշվարկները սղաճի առկայության դեպքում,
7. իմանա արժեթղթերի փոխարժեքների և եկամտաբերության հաշվարկները,
8. իմանա ներդրումային և լիզինգային նախագծերի արդյունավետության վերլուծությունը և գնահատումը,
9. իմանա ֆինանսներում մեծությունների միջին արժեքների հաշվարկները և նրանց առանձնահատկությունները:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ **EXCEL ԿԾ Փ**աթեթում ներմուծված ֆինանսական, մաթեմատիկական, վիճակագրական և տրամաբանական կատեգորիաների ֆունկցիաների կիրառումը ֆինանսական խնդիրների մոդելավորման և լուծման գործընթացում և լուծման մինի ծրագրերի ստեղծումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

ուսանողը՝

ա/. Ճիշտ է ներկայացնում ֆինանսական ֆունկցիաների դերը և նշանակությունը ֆինանսական խնդիրների լուծման ընթացքում

